2024, ՀՈՒՆԻՍ Ա, ԹԻՎ 11 (655)

Բրիտանյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ավարտվեց Գերագույն հոգևոր խորհրդի ժողովը

Հունիսի 11–13-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Գերագույն հոգևոր խորհրդի ընդլայնված կազմով ժողովը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույնի և օրհնության խոսքից հետո ժողովը վարելու հրավիրվեցին Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Վատիկանում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ Տ. Խաժակ արք. Պարսամյանը

և ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արք. Տերտերյանը:

Հայրենիքի առջև ծառացած արտաքին սպառնալիքների և ներքաղաքական զարգացումների մասին զեկույցներով հանդես եկան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Տ. Նաթան արք. Հովհաննիսյանը և Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ արք. Խաչատրյանը:

Քննարկման ընթացքում Գերագույն հոգևոր խորհուրդը խոր մտահոգությամբ անդրադարձ կատարեց ներքաղաքական խնդիրներին, անվտանգային մարտահրավերներին և հունիսի 12-ին Երևանում խաղաղ ցուցարարների նկատմամբ ոստիկանների անհամաչափ ուժի գործադրման միջադեպին: Այս առնչությամբ ԳՀԽ-ն հանդես եկավ առանձին հայտարարությամբ:

Մայր տաճարի հիմնանորոգության ընթացքի և վերաօծման, ինչպես նաև մյուռոնօրհնության արարողությունների կազմակերպական աշխատանքների վերաբերյալ զեկույցներով հանդես եկան Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ արք. Խաչատրյանը և վարչատնտեսական բաժնի տնօրեն Տ. Մուշեղ եպս. Բաբայանը:

Գոհունակությամբ արձանագրվեց, որ Մայր տաճարի հիմնանորոգությունն ավարտական փուլում է: Տեղեկացվեց սեպտեմբերի 27–29-ին նախատեսվող՝ Մայր տաճարի վերաօծման, սրբալույս մյուռոնի օրհնության արարողությունների և հարակից միջոցառումների նախապատրաստման փուլում իրականացված շինարարական, հրատարակչական, ծիսաարարողակարգային աշխատանքների ընթացքի մասին: Ընդգծվեց նաև, որ վերոհիշյալ արարողություններին հրավիրված են մասնակցելու միջեկեղեցական պատվիրակություններ, մեծանուն, վաստակաշատ ազգայիններ:

Ժողովականները, ողջունելով կատարված աշխատանքները, կարևորեցին պատշաճ կազմակերպումը նախանշված արարողությունների, որոնք նոր հույս և մխիթարություն պիտի պարգևեն համայն հավատավոր մեր ժողովրդին:

Ժողովի ընթացքում քննարկման առարկա դարձան եկեղեցավարչական, թեմերի գործունեությանը, կանոնական, իրավական, կրթադաստիարակչական ոլորտներին առնչվող տարաբնույթ այլ հարցեր: Որոշվեց 2025 թվականին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարել եկեղեցական-ներկայացուցչական ժողով:

Գերագույն հոգևոր խորհրդի ժողովն ավարտվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով և աղոթքով:

Գերագույն հոգևոր խորհրդի հայտարարությունը

Մենք՝ Գերագույն հոգևոր խորհրդի անդամներս, համախմբվելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում օրհնությամբ և բարձր նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, օրակարգային հարցերի քննարկումների ընթացքում խոր մտահոգությամբ անդրադարձ կատարեցինք մեր հայրենիքի առջև ծառացած ներքաղաքական խնդիրներին և արտաքին անվտանգային մարտահրավերներին:

Հետպատերազմյան շրջանում ՀՀ իշխանությունների վարած քաղաքականությունը և հատկապես վերջերս սահմանազատման և սահմանազծման գործընթացի անվան ներքո կատարած տարածքային միակողմանի զիջումները հիմնավոր նոր անհանգստությունների ու տագնապների պատճառ են դարձել ինչպես հայրենիքում, այնպես և սփյուռքում, տեղիք տվել անվստահության ձևավորման՝ հանգեցնելով նաև Հայաստանի վարչապետի հրաժարականի պահանջին:

Հայրենիքի առջև ծառացած անվտանգային մարտահրավերների շուրջ ժողովրդի բարձրաձայնած մտավախությունները, ազգային կառույցների և մասնագիտական հանրույթի կոչերն ու հորդորները, սակայն, անտեսվում են ՀՀ իշխանությունների կողմից և կամ հակադարձվում հավանական պատերազմի սպառնալիքներով: Իսկ հանրային ստվար շրջանակներում իշխանությունների նկատմամբ ձևավորված արդարացի դժգոհությունները, որ դրսևորվում են բողոքի և անհնազանդության խաղաղ գործողությունների միջոցով, փորձ է արվում լռեցնել ցուցարարների նկատմամբ արժանապատվության նսեմացմանն ուղղված գործողություններով և բռնի անհամաչափ ուժի գործադրությամբ:

Խստիվ դատապարտում ենք հունիսի 12-ին Երևանում խաղաղ հավաքի մասնակիցների նկատմամբ ձեռնարկված ակնհայտ ապօրինի քայլերը և գործադրված միջոցները, ինչի հետևանքով ցուցարարների և ոստիկանների շրջանում կան բազմաթիվ տուժածներ, այդ թվում՝ մարմնական ծանր վնասվածքներով:

Մեր կոչն է ՀՀ իշխանություններին զերծ մնալ բռնությունից, ատելություն և թշնամանք սերմանելու մերժելի դրսևորումներից: Մեր կոչն է նաև իրենց բողոքի ձայնն արտահայտող հայրենակիցներին գործել ամենայն զգոնությամբ և օրինահարգությամբ: Ներկա վտանգաշատ կացությունը կարող է արժանապատիվ հանգուցալուծումների, առկա ճգնաժամը՝ հանդարտության և զգաստության մեջ քաղաքական երկխոսության:

Դատապարտելի է նաև, որ իշխանության բարձրաստիճան ներկայացուցիչներն ու նրանց աջակից անձերը հետևողականորեն լծվել են հանրահավաքների կազմակերպման պատասխանատվությունը Եկեղեցուն վերագրելու անհիմն և ստահոդ լուրերի տարածմանը՝ փորձելով արդարացնել հակաեկեղեցական իրենց կեցվածքը, որի ամոթալի դրսևորումներից էր մայիսի 28-ին Սարդարապատի հուշահամալիրում Ամենայն Հայոց Կաթողիկոսի և եկեղեցականների դեմ հրահրված սադրանքը:

Բոլոր ժամանակներում հայրենի իշխանությունների կոչումն ու առաքելությունն է ներհասարակական համերաշխության պահպանումը և համազգային միաբանության ձևավորումը, ինչը կենսականորեն անհրաժեշտ է հատկապես մեր օրերս պայմաններում: Իշխանությունն ինքնին որևէ մեկի կամ որևէ քաղաքական ուժի համար չպետք է լինի սոսկ ձգտում, այլ առաջին հերթին՝ միջոց ժողովրդին և հայրենիքին խոհեմ, շրջահայաց ու անձնուրաց ծառայության և խաղաղ ու ապահով կյանքի կերտման:

Հավատում ենք, որ հայրենիքի հանդեպ սերը և պատասխանատվությունը պիտի հարթեն շավիղները՝ համազգային մեր ներուժն ու բոլոր կարողությունները ի սպաս դնելու Հայաստանի Հանրապետության պաշտպանությանն ու զորացմանը և իրականության կոչելու ապագայի համընդհանուր մեր տեսլականը:

Թող Ամենողորմ Տերը համերաշխ ու միասնական պահի ու պահպանի աշխարհասփյուռ մեր ժողովրդին և հայրենի մեր երկիրը խաղաղ ու անվտանգ ընթացքով առաջնորդի դեպի լուսավոր նոր հանգրվաններ:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Հունիսի 6-ին **Բուլղարահայ ուխտավորների**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց բուլղարահայ ուխտավորներին՝ գլխավորությամբ Բուլղարիայի Պազարջիկ քաղաքի Սուրբ Ստեփանոս հայկական եկեղեցու վարչության ատենապետ Նշան Պզտիկյանի:

Տիար Պզտիկյանը, ներկայացնելով հյուրերին, Նորին Սրբությանը տեղեկություններ փոխանցեց Բուլղարիայի հայկական համայնքների գործունեության մասին:

Իր հայրական օրհնությունը բերելով ուխտավորներին՝ Վեհափառ Հայրապետը կարևորեց Սփյուռքի հայորդիների ուխտագնացությունները դեպի Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, որոնք նորոգում են վերջիններիս ազգային, հոգևոր ապրումները, զորացնում ազգային ինքնության գիտակցությունն ու հաղորդ դարձնում հոգևոր արժեքներին:

Հանդիպմանը Հայոց Հովվապետը հորդորեց բուլղարահայերին համախումբ լինել Հայ Եկեղեցու շուրջ, ապրել ու արարել քրիստոնեական և ազգային արժեքներով, վառ պահել սերը հանդեպ Եկեղեցին և հայրենիքը:

Հունիսի 10-ին **Ամերիկայի հայկական համագումարի ղեկավար կազմին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ամերիկայի հայկական համագումարի (ԱՀՀ) նախագահ Քերոլին Մուգարին, համանախագահներ Վան Գրիգորյանին, Էնթոնի Բարսամյանին և գործադիր տնօրեն Բրայան Արդունին:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց երկրի առջև ծառացած անվտանգային հիմնախնդիրներին, Հայաստանի ներքաղաքական և բարոյահոգեբանական իրավիճակին: Կարևորվեց աշխարհասփյուռ հայության կյանքում Եկեղեցու առաքելությունը՝ ուղղված ժողովրդի միասնության ու համերաշխության ամրապնդմանը, ինչպես նաև համընդհանուր ջանքերի մեկտեղումը՝ ի նպաստ առկա մարտահրավերների հաղթահարման և հայրենիքի զորացման:

Հանդիպմանը ներկա էր նաև Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Վատիկանում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ Տ. Խաժակ արք. Պարսամյանը:

Հունիսի 16-ին **Նորաօծ եկեղեցականներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ նույն օրը Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում քահանայական ձեռնադրության արժանացած յոթ նորաօծ հոգևորականների հետ՝ ուղեկցությամբ ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ Տ. Մեսրոպ եպս. Պարսամյանի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետի պաշտոնակատար Տ. Հարություն վրդ. Կիրակոսյանի:

Հայցելով Հայոց Հովվապետի հայրական օրհնությունը՝ Մեսրոպ սրբազանը ներկայացրեց նորաօծ քահանա հայրերին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր օրհնությունը բերելով եկեղեցականներին, ընդգծեց, որ եկեղեցու առաքելությունն արդյունավորվում է նվիրյալ հոգևորականների շնորհիվ, և պատգամեց նորաօծ քահանա հայրերին իրենց եկեղեցանվեր ծառայությունն իրականացնել ամբողջանվեր և անձնազոհ կերպով:

Վեհափառ Հայրապետը նաև հորդորեց նորաօծ հոգևորականներին չընկճվել դժվարությունների և փորձությունների առջև, անմնացորդ նվիրվել իրենց ծառայությանը, կրթել և դաստիարակել հայորդիներին, նրանց մեջ սերմանել հավատքն առ Աստված, սերն առ հայրենին և Սուրբ Եկեղեցին:

Հանդիպման ընթացքում նորընծա քահանա հայրերը ևս իրենց երախտագիտության խոսքն ուղղեցին Նորին Սրբությանը՝ խոստանալով արդարացնել Հայոց Հայրապետի հույսերը և անսակարկ ծառայել երկնավոր Տիրոջն ու հայ ժողովրդին:

Նշվեց Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոնը

Հունիսի 2-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոնը:

Բերկրառատ օրվա առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, պատարագի սրբազան արարողությանը մասնակցեց Սուրբ Գայանե վանքում: Պատարագիչն էր Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Զաքարիա ծ. վրդ. Բաղումյանը:

Սուրբ պատարագին ներկա էին Մայր Աթոռի տարբեր կառույցներում պաշտոնավարող եպիսկոպոսներ, հայաստանյան թեմերի առաջնորդներ և բազմաթիվ ուխտավոր հայորդիներ:

Հայր սուրբը, անդրադառնալով տոնի խորհրդին, խոսեց Սուրբ Էջմիածնի նշանակության և մեր ազգի կյանքում ունեցած դերակատարության մասին: «Սուրբ Էջմիածինը խտացումն ու պահապանն է ազգային-քրիստոնեական մեր ինքնության, որ հաստատվեց Միածնի իջմամբ, հայացավ Սուրբ Թարգմանիչ վարդապետների սխրանքով, դարերի ընթացքում բյուրեղացավ հայերիս հոգում և սրտում՝ դառնալով անմահության գրավականը, մարդ–Աստված հանդիպման վայրը, ուր ժամանակն անժամանակ է, իսկ սրտաբուխ աղոթքը՝ լսելի: Հավատարիմ լինել Սուրբ Էջմիածնի խորհրդին նշանակում է անմնացորդ սիրել մեր հայրենիքը, աստվածահաստատ Հայոց Եկեղեցին և հավատալ անմահությանը՝ դառնալով լույսի, հույսի և սիրո քարոզիչներն այս կյանքում»,– նշեց հայր Զաքարիան:

Պատարագիչ հոգևորականը տոնի առիթով նաև շնորհավորեց Վեհափառ Հայրապետին, Մայր Աթոռի միաբանությանը և բոլոր հավատացյալներին՝ մաղթելով, որ Սուրբ Էջմիածնի օրհնությամբ կարողանանք շուտափույթ հաղթահարել բոլոր փորձություններն ու մարտահրավերները:

Պատարագի սրբազան արարողության ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց Հայրապետական մաղթանք:

Ներկա հավատացյալ ժողովուրդը և եկեղեցականներն աղոթք բարձրացրին առ Աստված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հավերժ պայծառության, շենացման, անսասանության և հայոց կյանքում իր սրբազան առաքելության հարատևության համար:

Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում տեղի ունեցավ քահանայական ձեռնադրություն

Հունիսի 16-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում կատարվեց քահանայական ձեռնադրություն:

Հընթացս սուրբ և անմահ պատարագի, ձեռամբ ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ Տ. Մեսրոպ եպս. Պարսամյանի, քահանայական ձեռնադրության և օծման արժանացավ Մայր Աթոռի տարբեր կառույցներում սպասավորող յոթ սարկավագ:

Պատարագի սրբազան արարողության ընթացքում Մեսրոպ սրբազանը քահանայության կոչեց նորընծաներին՝ սրբալույս մյուռոնով օծելով քահանաների ճակատներն ու ձեռքերը և շնորհելով նրանց հոգևոր նոր անուններ:

Գևորգ սրկ. Ստեփանյանը վերակոչվեց տեր Կարապետ քհն., Էդգար սրկ. Օհանյանը՝ տեր Դավիթ քհն., Վահե սրկ. Մկրտչյանը՝ տեր Բարսեղ քհն., Սամվել սրկ. Պապիկյանը՝ տեր Կորյուն քհն., Սարգիս սրկ. Փահլևանյանը՝ տեր Արսեն քհն., Հարություն սրկ. Մելքոնյանը՝ տեր Շահան քհն., և Գառնիկ սրկ. Սարդարյանը՝ տեր Սարգիս քհն.:

Ձեռնադրության ավարտին նորաօծ քահանաներն իրենց անդրանիկ օրհնությունը փոխանցեցին հավատացյալներին:

Այնուհետև ձեռնադրող սրբազան հայրը, իր քարոզում անդրադառնալով քահանայության կարևորությանը, մաղթեց նորընծաներին, որ քահանայական ծառայության մեջ Սուրբ Հոգին Իր զորությամբ առաջնորդի նրանց: «Մեր Տեր Հիսուս Քրիստոսն ասում է՝ «Սուրբ Հոգին պիտի իջնի ձեզ վրա, զորություն պիտի առնեք և լինեք Իմ վկաները» (հմմտ. Գործք Ա 8):

Զորությունը, սիրելիներ, ստանում ենք մեկ նպատակի համար, որպեսզի լինեք մեր տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի վկաները: Դուք Սուրբ Հոգու շնորհները, զորությունը ձեր ճակատներին, սրտերին ու ձեռքերին կրող քահանաներ եք և Քրիստոսին պիտի վկայեք ձեր ընտանիքներում, ձեր քաղաքում, Հայաստան աշխարհում և աշխարհի տարբեր ծագերում»,— ասաց Մեսրոպ սրբազանը՝ հորդորելով նորաօծ քահանա հայրերին մշտապես վկայել Քրիստոսի սերը և իրենց անձերը նվիրաբերել ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և ի փառս Աստծու:

Սրբազան հայրը նաև իր երախտագիտությունը հայտնեց Նորին Սրբությանը՝ քահանայական ձեռնադրություն կատարելու հնարավորություն ընձեռելու համար:

Ապա Մայր Աթոռի միաբաններն ու ներկա հոգևորականաց դասը բարձրացան Սուրբ Խորան, շնորհավորեցին քահանաներին և համբուրեցին վերջիններիս մյուռոնաբույր ճակատներն ու ձեռքերը՝ ստանալով անդրանիկ «Ողջույնը»:

Նույն օրը՝ երեկոյան, Սուրբ Գայանե վանքում կատարվեց նաև վեղարի տվչության արարողություն:

Տեր Դավիթ և տեր Շահան քահանաները վեղար ստացան ու համալրեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության շարքերը:

Նորաօծ քահանաները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կանգկացնեն քառասնօրյա պատրաստության և աղոթքի շրջան, որից հետո ծառայության կկոչվեն Հայ Եկեղեցու տարբեր կառույցներում և թեմերում:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

«Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին վճարում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և պետական պարտադիր վճարները»

Հարցազրույց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վերատուգիչ հանձնախմբի ատենապետ Տ. Արարատ եպս. Գալֆայանի հետ

—Սրբազա՛ն, արդյո՞ք հիմնավոր են ՀՀ իշխանության հայտարարությունները, թե Եկեղեցին պետք է հարկատվության օրինական դաշտ բերվի: Հայտնի է, որ որոշ հարկային պարտավորություններից ազատված է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, կորոշակիացնե՞ք՝ որոնք են դրանք:

—Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին չի վճարում այն հարկերը, որոնցից ազատված է ՀՀ օրենսդրությամբ: Մասնավորապես՝ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 9-րդ կետը սահմանում է, որ կրոնական ծիսակատարությունների կազմակերպման ծառայությունների մատուցումը, կրոնական կազմակերպություններին կրոնական պարագաների օտարումը, ինչպես նաև կրոնական կազմակերպությունների կողմից այդ պարագաների օտարումը ազատված են ԱԱՀ-ից: Ընդ որում՝ կրոնական ծիսակատարություններ կազմակերպում է ոչ միայն Հայ Առաքելական Եկեղեցին: Օրինակ՝ մոմավաառությունը ծիսական-բարեպաշտական սովորույթ է, և հավատացյալների կարիքների համար եկեղեցիների տարածքում իրականացվում է մոմավաճառություն: Մոմի, խունկի կամ այլ ծիսապաշտական պարագաների վաճառքը շահույթ չի ակնկալում, հետևաբար շահութահարկ չի գոյանում: Ի դեպ՝ մոմի վաճառքի գինը չի փոխվել 2009 թվականից, մինչդեռ 15 տարվա ընթացքում շուրջ 2,5 անգամ բարձրացել է նվազագույն աշխատավարձի չափը: Եթե հարկային օրենսդրության մեջ փոփոխություն արվի, և մոմի վաճառքից ԱԱՀ գոյանա, նշանակում է՝ պիտի այդ չափով բարձրանա մոմի գինը՝ ի հաշիվ բնակչության:

Հարկային օրենսգրքի համաձայն՝ ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացված ակտիվները, աշխատանքները և ծառայությունները հարկվող եկամուտ չեն համարվում: Համապատասխանաբար՝ այդ անհատույց ստացված ակտիվների հաշվին կատարված ծախսերը նույնպես հարկային ծախս չեն համարվում: Այսինքն՝ եկեղեցու ծախսերի զգալի մասը կատարվում է ստացված նվիրատվությունների հաշվին, որոնք՝ որպես անհատույց ստացված ակտիվ, չեն մասնակցում շահութահարկի հաշվարկներին: Ուշագրավ է, որ այսպես սահմանված է բոլոր ոչ առևտրային կազմակերպությունների համար....

—Օրենսդրությամբ սահմանված ի՞նչ հարկեր է պետբյուջե մուծում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին:

—Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին վճարում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և պետական պարտադիր վճարները: Հիմնական մասը կազմում է եկամտային հարկը: Օրինակ՝ այս եռամսյակում աշխատավարձի գծով եկամտային հարկը կազմել է 120 334 945 դրամ, պասիվ եկամուտների գծով՝ 305 3716 դրամ: 2024 թ. առաջին եռամսյակում հաշվարկվել և պետբյուջե են փոխանցվել 156 701 381 դրամի հարկեր ու պարտադիր վճարներ:

Գույքահարկի մասին ևս օրենսդրությունը հստակ սահմանումներ ունի. գույքահարկ է նախատեսվում անշարժ գույքի և փոխադրամիջոցների նկատմամբ: Փոխադրամիջոցների գույքահարկ եկեղեցին ամբողջությամբ վճարում է, բոլոր հաշվետվությունները պատշաճ ներկայացված են: Ինչ վերաբերում է անշարժ գույքին, ՀՀ հարկային օրենսգրքի 230 հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ անշարժ գույքի հարկից ազատված են պետական սեփականություն համարվող պատմամշակութային նշանակության հարկման օբյեկտ համարվող շինությունները, ինչպես նաև կրոնական կազմակերպություններին սեփականության իրավունքով պատկանող՝ մինչև 1991 թվականը կառուցված կրոնական, պաշտամունքային շինությունները: Իսկ 8-րդ կետը սահմանում է, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) սեփականության և անհատույց մշտական օգտագործման իրավունքով պատկանող հուշարձանի կարգավիճակ չունեցող եկեղեցիները, հոգևոր-մշակութային, կրթադաստիարակչական, եկեղեցական և ծիսական պարագաների արտադրության և իրացման համար օգտագործվող շինությունները, կառույցները, դրանց սպասարկման և օգտագործման համար անհրաժեշտ հողամասերն ունեն անշարժ գույքի հարկային արտոնություն: Այնպես որ, Մայր Աթոռը պատշաճ կատարում է իր հարկային պարտավորությունները՝ ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան:

— Դուք նշեցիք, որ Մայր Աթոռի ծախսերի զգալի մասը կատարվում է ստացված նվիրատվությունների հաշվին: Այդ նվիրատվությունների կամ դրամային շնորհների ծախսումը հաշվետվողակա՞ն է և հասանելի՞:

—Մայր Աթոռին նվիրատվությունները, ֆինանսական օժանդակությունները արտասահմանյան ֆոնդերից կամ տարբեր երկրներում ապրող անհատ բարերարների կողմից են: Բոլոր հոսքերը գալիս են բանկային փոխանցումներով: Այդ գումարներով Մայր Աթոռն իրականացնում է բարեգործական ծրագրեր, գործառնական և կապիտալ բնույթի՝ եկեղեցիների կառուցման, վերակառուցման, պահպանման ծախսեր: Միայն Ս. Էջմիածնի Մայր տաճարի վերականգնման նպատակով ծախսերը հսկայական են, և եթե վստահություն չլիներ, որ մեր ծախսերը պատշաճ են կատարվում և թափանցիկ են, դժվար թե շարունակաբար օժանդակություն ստանայինք: Չմոռանանք նաև, որ մեր եկեղեցիները պատմամշակութային արժեքներ են, և մենք իրականացնում ենք դրանց պահպանության ծախսերը՝ թեթևացնելով պետության բեռը: Այդ ծախսումներից ՀՀ պետբյուջե դրամական միջոցներ են մուտք գործում նաև անուղղակի կերպով: Օրինակ՝ կապիտալ շինարարության ոլորտում, 2000 թվականից սկսած, Մայր Աթոռը 115 միլիոն դոլարին համարժեք գումար է ծախսել: Դա հսկայական հոսք է երկրի տնտեսության մեջ: Ակնհայտ է, որ նշված ծրագրերի շրջանակներում բացվում են լրացուցիչ աշխատատեղեր, և վճարված աշխատավարձից շինարարական կազմակերպությունները գանձում և եկամտային հարկի տեսքով պետական բյուջե են վճարում էական գումարներ: Դա անուղղակի ձևով նպաստում է նաև տնտեսական աճին: Բացի այդ՝ մեր կողմից պահպանվող պատմամշակութային կոթողներն օգտակարություն են բերում երկրի զբոսաշրջային բիզնեսին, հայտնի է՝ որքան զբոսաշրջիկներ են այցելում Գեղարդավանք, Խոր վիրապի վանք, Մայր տաճար և այլ սրբավայրեր: Հարկ է նշել, որ Հայ Առաքելական Եկեղեցին կատարում է թե՛ նշված ընթացիկ պահպանման, թե՛ կապիտալ բնույթի ծախսերն ինքնուրույն՝ առանց ՀՀ պետբյուջեից այդ նպատակի համար որևէ գումար ստանալու: Կարևոր է նշել նաև, որ հայտարարված դրամահավաքների հաշվին Եկեղեցին իրականացնում է բարեգործական բազմաթիվ ծրագրեր: Բարեգործական ծրագրերի հետ կապված՝ մեկ օրինակ բերենք միայն. 44-օրյա պատերազմի ժամանակ, երբ Կառավարությունը կոչ արեց ֆինանսական աջակցություն ցուցաբերել երկրին, և այդ նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարանում հաշվեհամար բացվեց, Մայր Աթոռը 2 միլիոն 300 000 դոլարին համարժեք դրամ փոխանցեց իր հավաքագրած գումարներից: Եվս 3 միլիոն դոլարի համարժեք դրամ, 2020 թ. պատերազմի ավարտից առ այսօր, ծախսվել է արցախահայության կարիքների համար՝ թե՛ Արցախի շրջափակման ժամանակ, թե՛ բռնի տեղահանված մեր հայրենակիցներին սոցիալական աջակցություն տրամադրելու համար: Ընդհանուր առմամբ՝ այս ուղղությամբ կատարված ծախսը 5 միլիոն 300 000 դոլար գումար է կազմել:

Առհասարակ, Մայր Աթոռին նվիրաբերված բոլոր գումարները նպատակային են, դրանց վերաբերյալ բոլոր հաշվետվությունները պարբերական կարգով ներկայացվում են նվիրատուներին: Հատկապես մեծ գումարների նվիրատվությունները և դրամաշնորհները փաստում են Հայ Եկեղեցու նկատմամբ վստահության մասին: Եթե դրանք նպատակային չծախսվեին և չարաշահվեին, հավատացեք, մեկ անգամ գումար նվիրաբերողը կամ դրամաշնորհ տրամադրողը երկրորդ, երրորդ անգամ դա չէր անի, և այդ անվստահությունը շատ արագ կտարածվեր ու կարտահայտվեր նաև մյուս նվիրատուների կամ հիմնադրամների վարքագծում:

—Շնորհակալություն պարզաբանման համար...

«Քրիստոնյա Հայաստան»

Գարեգին Նժդեհը և Հայոց Եկեղեցին

«Ներսես Մեծը, լսելով Հայաստանի գլխին եկած դժբախտությունների մասին, հունական զորքերով կմտնի Հայաստան: Մերուժանը, հրամայելով բերդի պարսպից կախ տալ հայ նախարարների կանանց, կը թողնի Հայաստանի սահմանները և օգնություն կը խնդրի Շապուհից: Կը հասնեն պարսից զորքերը, և դավաճանը կը շարժվի Հայաստանի դեմ: Կռիվը կսկսվի Ձիրավի տափարակի վրա.... երբ Ներսես Մեծը կը բարձրանա Նպատ լեռը, ձեռքերը կը բարձրացնե դեպ երկինք և աղոթելով, կիջեցնի ձեռքերը, մինչև որ չեն հաղթի Հայերը:

Ահա հաղթելու գաղտնիքը:

Ներսես Մեծը լեռան վրա. ինչպիսի՜ վեհ պատկեր: Ինչպիսի՜ վսեմական նյութ՝ հանճարեղ վրձնի և մտահայեցության համար: Իսկ առաջնորդի համար՝ սկիզբն ու վախճանը իմաստության: Ռազմավարի համար՝ հաղթելու գաղտնիքը, նշանակը այդ աստվածային գաղտնիքի, որ շարունակում է արձանացած մնալ մեր պատմության ոսկե էջերից մեկի վրա:

Մեծ Պարթևը լեռան վրա. սիրում եմ ապրել ու վերապրել այդ կախարդիչ պատկերի գեղեցկությունն ու վեհությունը»:

Գարեգին Նժդեհ

Գարեգին Նժդեհը՝ Լեռնահայաստանի սպարապետը, հայ ռազմավարական և փիլիսոփայական հանճարի խտացումը, բազմիցս շեշտել է Հայ Առաքելական Եկեղեցու հայրենապահ վիթխարի դերը՝ հայությանը ՑԵՂԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՎ վերադաստիարակելու, պետության հիմքերն ամրապնդելու, ազգային-հոգևոր արժեքները պահպանելու և դրանք սերնդեսերունդ քարոզելու գործում. «Ազգերը չունեն ավելի ճակատագրական պաշտոնյաներ, քան իրենց եկեղեցին, դպրոցը և մամուլը վարողները: Կղեր, ուսուցիչ, խմբագիր — մեծագույն օրհնություն և չարիք միաժամանակ: Օրհնություն են, երբ ՑԵՂՆ է վարում նրանց խղճմտանքը, անենք, երբ ՑԵՂԻՑ չեն առնում իրենց ներշնչումները»,— գրել է Նժդեհը:

Հազարամյա մշակույթի ու կրոնի տեր մեր ժողովրդի մեծագույն զավակը, որ ազգային գոյաբանության սրբազան պայքարին ծառայեցրեց թե՛ սուրը, թե՛ գրիչը միաժամանակ, գտնում է, որ անկրոնությունը բնավ առողջ հոգեվիճակ չէ: Նժդեհի համոզմունքով՝ «Ով հեռանում է կրոնից, անձնասպանորեն կտրում է իր հոգևոր զարկերակը. իր Արարչի դեմ գործողը պիտի չքաշվի գործել և իր նմանների դեմ»: Գարեգին Նժդեհը գտնում է, որ կրոնը միայն Արարչի և արարածի հարաբերություն չէ, այլև մարդու և մարդու, անհատի և հավաքականության, անձի և ճշմարտության հարաբերություն. «Նա, ով ընդունում է ԱՍՏԾՈ գոյությունը, ընդունում է նաև իր պարտականությունը՝ հանդեպ գերագույն իրականության՝ ԱԶԳ, ՀԱՅՐԵՆԻՔ, ՊԵՏՈՒԹՅՈՒՆ»,— սահմանում է Նժդեհը և վերահաստատում. «Ուզո՞ւմ եք խորապես ճանաչել մեկին՝ խոսեք և խոսեցրեք նրան Աստծո մասին, և նա իր պաշտամունքի և անհավատության միջոցով պիտի մատնե իր հոգևոր հասակը: Անաստվա՞ծ ես, զուրկ ես սրբության նվիրումից, պարտականության զգացումից, ասել է՝ վաղ թե ուշ պիտի դավաճանես նմաններիդ»:

Գ. Նժդեհը քննադատում է կեղծ եվրոպականությունը, որը կրոնական պաղության մղեց մեր ժողովրդին: Ազգային մշակույթն ըստ արժանվույն գնահատող հանճարը մշակութային յուրաքանչյուր ճշմարիտ արժեք կապում է հոգևորի, կրոնականի հետ՝ փաստելով, որ չկա մշակույթ՝ առանց կրոնականության զգացումի, ցամաքում է ցանկացած մշակույթի խանդավառության աղբյուրը, երբ այն դառնում է նյութապաշտ. «Հայը պիտի դավանի ՈԳՈՒ առաջնությունը նյութի նկատմամբ»,— պահանջում է Նժդեհը՝ կրոնականության պակասն իրավացիորեն համարելով աստվածության և սրբության զգացումի պակաս, որի պատճառով «հոգևոր շփոթի է մատնված օրվա մարդկությունը»: Կարևորելով ԱՍՏԾՈՒՆ և ԱՍՏՎԱԾԱՅԻՆԸ անհատի մեջ՝ մեծ փիլիսոփան կրոնը համարում է զսպիչ արժեք, որը կոչված է սանձած պահելու անասունն ու անասնականությունը մարդու մեջ:

Քանի որ ժողովուրդներն իրենց մշակույթի մեջ դնում են կատարելության ձգտումը, Նժդեհը կասկածելի է համարում այն մշակույթը, որն ստեղծողի հոգևոր կյանքում «ավելի փուշ ու տատասկ են աճում, քան բարության ծաղիկներ». «Մշակույթը ենթադրում է սրտի ջերմություն, մարդկայնություն, խղճմտանքի արթնություն և մտածումի և հարաբերությունների ազնվություն, նպատակների վսեմություն, արժեքներ, որոնց պակասի պատճառով օրվա հայ կյանքը վերածված է դժոխքի»:

Նյութապաշտությունը համարելով սրբապղծություն և անասնականություն՝ հատկապես ռազմական և քաղաքական առաջնորդների համար, Նժդեհը գտնում է, որ «Կընկնեն, կպարտվեն, կմեռնեն ժողովուրդները, երբ կթունավորվեն անասնացնող նյութապաշտությամբ, երբ նրանց մեծամասնությունն իր ԱՍՏՎԱԾԸ կդարձնե անձնական կաշի, երբ կժխտե այլասիրական ամեն տեսակի պարտականություն և վախով ու անվստահությամբ կնայե իր ապագային»:

Հղում անելով Ֆ. Վերֆելի՝ «Ոգու ժողովուրդ է հայը» գնահատումը՝ Նժդեհն ամոթանք է տալիս մեր ցեղակիցներին, որ «օտարը պիտի գար ասելու», թե հայը ոգու ժողովուրդ է, որ մենք կյանքի թոհ ու բոհում հեռանում ենք մեր արմատներից՝ իջեցնելով մեր ազգային ինքնագնահատականը. «Ոգեշունչ է քրիստոնեությունը,— գրում է Նժդեհը,— այդ է պատճառը, որ նրա գիրկը նետվողներից առաջինը եղավ հայը»: Այնուհետև՝ «Վերացնելով մահվան և կյանքի միջև գոյություն ունեցող անջրպետը, Նազովրեցին ժխտեց մահը, որովհետև հանդիսացավ հավիտենական սերմնացանը ՈԳՈՒ հսկաների՝ սուրբերի, նահատակների, հերոսների»:

Հայոց ռազմական հանճարն իր ինքնակենսագրության մեջ ընդգծում է , որ ինքը եղել է հավատքի մարդ, և որ հավատքի ու պաշտամունքի տաճարում իր համար միշտ էլ առաջին տեղում են եղել ԱՍՏԾՎԱԾ և ՀԱՅՐԵՆԻՔ:

Նժդեհը ցեղի հոգու հայելին համարում է նրա կրոնը, որովհետև գտնում է, որ «ցեղի մտավոր ինքնահայտնությունը հնարավոր է միայն իր աստվածների միջոցով»: Մտաբարոյական զարգացման չափով Ցեղն իր կրոնի մեջ դնում է իր հոգեբանական գծերը, աշխարհազգացողությունը: «Ինչո՞ւ եմ ցեղակրոնություն քարոզում»,— ասում է Նժդեհը,— որովհետև. «բացարձակապես անկարելի է անսխալ դաստիարակություն, քաղաքականություն, ռազմավարություն մշակել առանց սեփական ցեղի ոգու հիմնական ճանաչումի»:

Անձնուրաց հայրենապաշտը գտնում էր, որ հայրենասիրությունը կասկածելի է, եթե այն ցեղասիրություն չէ: Նա «հայորեն» խորթ ու պակասավոր է համարում անցեղակրոն տարրերին. «Ցեղորեն խաթարված է այն ժողովուրդը, որ ասում է՝ աշխարհն է իմ հայրենիքը.... Ցեղն ազնվազարմ արյունն է, որի ձայնը հնարավոր չէ լռեցնել, ճակատագիր է, որից հնարավոր չէ և չի կարելի խուսափել»: Մեծ մտածողը մարդկության թշնամի է համարել այն գիտությունը և գործիչներին, որ ուսուցանում են, թե գիտությունը ո՛չ կրոն ունի, ո՛չ էլ՝ ՀԱՅՐԵՆԻՔ. «Մեր երկրագնդի վրա անհայրենիք, անցեղ, անաստված է մարդկային ստորությունը միայն»,— արդարացիորեն գնահատել է Նժդեհը:

Կարևորելով ցեղային ինքնաճանաչումը՝ Նժդեհն աղետ է համարում սեփական ուժերի գերագնահատումն ու ստորագնահատումը: Նա պահանջում է դառնալ ցեղաճանաչ՝ երիցս շեշտելով, որ ցեղայնությունն է հայի հիմնական ապավենը. «Ցեղորե՛ն, ցեղորե՛ն ապրենք,— պահանջում է ցեղամարդը,— որ կարողանանք օգտվել մեր ցեղին հատուկ հերոսականությունից և գերագույն պատվասիրությունից, նրա կրոնական բոցավառությունից և մշակութային խանդից.... Ոչ թե եվրապականացում, այլ ցեղայնացում»,— պահանջում է Նժդեհը: Ցեղային արժեհամակարգը, որ ազգի ոսկե միջուկն է, Նժդեհը համարում է հոգևոր զրահ, որն օտար միջավայրերի այլասերիչ ազդեցություններից կարողանում է անեղծ պահել ազգային դիմագիծը. «Միայն ոգու մարդը կարող է ՑԵՂԱՄԱՐԴ լինել, և միայն նմանը կարող է, բարոյական իրավունք ունի լինելու մեր ժողովրդի ղեկավարը, միայն նմանին կարելի է հայ ժողովուրդ և ԵՐԿԻՐ վստահել»,— գտնում է Նժդեհը:

Չարիքներից մեծագույնը Նժդեհը համարում է ստամտավորականությանը, որի ապազգային վարքի առաջին զոհերից մեկը եղավ Հայ Եկեղեցին. «աղվեսների կողմից առյուծներ խեղդելու» և «սինլքորների» ձեռքով ՀԻՍՈՒՍՆԵՐ խաչելու ոճիրի մեջ Նժդեհը հանցագործ է համարում ստամտավորականությանը: Մեր հայրենիքի դժբախտության գլխավոր պատճառներից մեկը Նժդեհը համարում է նաև հայ մարդու օրվա ստահայրենասիրությունը: Քննադատելով կեղծ հայրենասերներին ու բարոյախոսներին՝ նա գտնում է, որ եթե քննադատողը չի տառապում, նա «վուլգար» չարախնդացող է, ոչ թե քննադատ:

Անվեհեր զորապետը մարդու առաքինություններից կարևորագույնը համարում է ԱՐԻՈՒԹՅՈՒՆԸ՝ կենսաբանորեն անբարոյական համարելով վախկոտին, քանի որ վախից են սնվում ստորությունն ու փոքրոգությունը. «Պակասո՞ւմ է արիությունը,— գրում է նա,— այլևս ոչինչ չարժեն գաղափարները, տեսությունները, ծրագրերը, քանզի պակասում է նրանց իրականացնող ուժը»: Հայոց պետականության կործանման պատճառը Նժդեհը համարում է ոչ թե արիության պակասը, այլ իրարակերությունն ու երկպառակությունները: Նժդեհի համոզմամբ՝ օրվա հայությունը չգիտի, որ արիությունը Հայոց աշխարհի համար դարերով կատարել է ՀՈԳԵՎՈՐ ՇԱՆԹԱՐԳԵԼԻ դեր՝ չեզոքացնելով ու զինաթափելով բազում արտաքին վտանգներ, որովհետև օրվա հայությունը չի դաստիարակվում արիների մեծագործություններով, ինչը զորապետը համարում է «մեր դժբախտություններից մեծագույնը»:

Ժողովրդի բարոյական դիմագիծը կերտելու կարևոր գործում Նժդեհը շեշտում է ազգային ընտրանու գերակա դերը. «Եկեղեցական, ուսուցիչ, գրող, գիտնական, զորական, գործիչ — ահա ԸՆՏՐԱՆԻՆ: Ընտրանին միայն անձնական օրինակով կարող է դաստիարակել զանգվածներին, զի վարակիչ է ընտրանու վարքագիծը.... Ազգերը մի հատիկ ճշմարիտ ազնվականություն ունեն, դա ընտրանին է. նրա միջոցով են բարձրանում և նրա հետ են ընկնում ազգերը.... Բավական է, որ ԸՆՏՐԱՆԻՆ պատկանող մեկը մեղանչեց իր կոչումին դեմ, այլևս քանդված համարեք ժողովրդի հավատքը, համարումը, բարոյականը»:

Ըմբոշխնելով Նժդեհյան գաղափարաբանության կենսահաստատ իմաստնությունը՝ հանգում ենք այն եզրակացության, որ Նժդեհի ուսմունքն օծված է ԱՍՏՎԱԾԱՅԻՆ սիրով և իմաստնությամբ: Ինչի մասին էլ խորհրդածում է անընկճելի զորահրամանատարը, ելակետը մեկն է՝ ԱՍՏՎԱԾ և ՀԱՅՐԵՆԻՔ միաժամանակ: Այն, ինչ քարոզում է ազգային նվիրյալ գործիչն իր ուսմունքով, քրիստոնեական պատվիրանների ճշմարտացիության վերահաստատումն է: Ահավասիկ դրանցից մեկը. «Հրեշ է ստախոսը, պիտի վերանա կեղծիքը մեր իրականությունից, որ ապրի մեր հայրենիքը»: Նժդեհյան գաղափարաբանության մեջ ընդգծվում են պատվիրանները սրբորեն պահելու անհրաժեշտությունը, անձնազոհ նվիրումը դավանած գաղափարին:

Եվ իր ամբողջ կյանքը Գարեգին Նժդեհն ապրեց քրիստոնեաբար՝ չշեղվելով երբեք իր դավանած Աստծուց և ամեն ինչ զոհելով հանուն հայրենիքի. «Խղճմտանքից զատ, ես ճանաչում եմ երկու գերագույն դատավորներ — ԱՍՏՎԱԾ և ԺՈՂՈՎՈՒՐԴ»,— ասում է Նժդեհը: Այնուհետև «Անձնավկայության» մեջ շարունակում է. «Կրելով կնիքը Հայաստանի բնության և պատմության՝ հայ եմ ես. մտածումով, ապրումներով, սակայն, ես մարդ եմ, ՀԱՄԱՄԱՐԴ: Ես ընկերն եմ անհրավվածի, եղբայրը՝ հալածվողի, և զինակիցը՝ բևեռեբևեռ ավելի արդար աշխարհի համար մարտնչողների: Դավանանքս է՝ մարդկայնություն, ավելի մարդկայնություն»:

Հայ Առաքելական Եկեղեցին՝ որպես մարդուն մարդ պահող, մեր նախնիներից ի պահ թողնված ազգային արժեհամակարգը կրող, պահպանող և տարածող կառույց, այսօր էլ շարունակում է իր հայրենապահ առաքելությունը, որին հետամուտ է նաև Նժդեհի ուսմունքը:

Սիլվա ԽԱՉԱՏՐՅԱՆ
Բ. Գ. Թ.

- **«Քրիստոնյան նա՛ չէ, ով քրիստոնեական վարդապետության տարերքը սխալ է հասկացել, ընկել նախապաշարումների ցանցի մեջ և տկարացել կորչելու աստիճան, այլ նա, ում մեջ մի քիչ քրիստոսություն կա, մի կայծ ամենահզոր աստվածամարդու հոգուց»:**
- **«Սկզբից ի վեր հայությունն ու իր Քրիստոնեությունը ձուլված են ի մի բնությո՛ւն: Այս երկուսի ճակատագիրը նույնացա՛ծ է»:**
- **«Ի՞նչ է նշանակում, երբ Հայ Եկեղեցին սրբացնում է Մամիկոնյան ոգին, այդ ոգու կրողներին: Արդյոք դա միայն երախտագիտության տո՞ւրք է, թե՞ նաև խորագույն մտահոգություն հայրենիքի ապագայի հանդեպ: Սրբացնելով ու հավերժացնելով Մամիկոնյանների ուխտը՝ եկեղեցին մեր ժողովրդին տված է ինքնապաշտպանության զենքերից ամենահատուն ու հաղթականը — «մահ գիտեցեալը»:**
- **«Մարդը, գաղափարի աստվածաշունչ մարդն է մեռել, մարդն է պակասում մեզ եսականության ու մաղձի, նյութապաշտության ու շահի այս անփառունակ ու կոշմարային օրերում»:**

Գարեգին Նժդեհ

Ակսել Բակունց —125

Ակսել Բակունցի ստեղծագործական նկարագիրը հնարավորություն է տալիս հայ գեղարվեստական մտքի զարգացման նորագույն շրջանի հետ կապված մի ուղենշային ընդհանրացում անելու: Այդ ընդհանրացման սահմանագծերը ներկայանում են բևեռացման ձգտող երկու հիմնական եզրով՝ որպես աշխարհ և բնաշխարհ:

Նույն միջավայրում, նույն ժամանակի մեջ և նույն գրական պայքարի շահագրգռություններով ապրող գրողներ, որոնց մի մասը միտվում է դեպի աշխարհ՝ դեպի մեծ աշխարհ, մյուս մասը՝ դեպի բնաշխարհ՝ դեպի տեղային աշխարհ: Չարենցը գնում էր դեպի XX դարի «համաշխարհը», Բակունցը՝ դեպի Մթնաձոր: Նույն միտումը եղել է նաև նրանցից առաջ և նրանցից հետո ու մի որոշակի դիմագիծ հաղորդել XX դարի հայ գրականությանը:

Չարենցը Բակունցին զգուշացրեց Մթնաձորում կորչելու վտանգից. «Աշխատիր, սակայն, որ մութ այդ ձորում // Քո պայծառ ուղին անդարձ չկորի...», և նրա առջև բացեց մեծ խիզախումների քարտեզը՝ «Թուղթ Ակսել Բակունցին, գրված Լենինգրադից»:

Այն պահին, երբ Չարենցի համար աշխարհը դառնում էր «Մի փոքրիկ, փոքրիկ փողոց», Բակունցի համար Մթնաձորը դառնում է մի մեծ աշխարհ, մի ուրույն աշխարհ: Նրանք՝ Չարենցն ու Բակունցը, գրական ծրագրեր էին մշակում, գրական քաղաքականություն էին իրականացնում, գրական դաշինքի մեջ էին, ժամանակը հոլովում էր Չարենց—Բակունց գրական խմբակի գոյության փաստը, որի ծրագրային արտահայտությունը եղավ Մ. Արմենի «Չարենցի և հարակից խնդիրների մասին» (1933) հոդվածը, բայց որպես ստեղծագործողներ՝ նրանք խորապես տարբեր էին իրարից: Տարբեր էր նրանց մարդկային նկարագիրը, խառնվածքը, տարբեր էր գրականությանն ուղղված հայացքը, ինչն իր հետ բերում էր համապատասխան նյութ, հերոս, նկարագրություն: Ինքը՝ Բակունցը, բանտից գրած դիմումներից մեկի մեջ (6. 10. 1936) այդ կապակցությամբ այսպես է արտահայտվում. «Վերը ես նշեցի սոսկ տարեթվեր, որոնցով ընթացել է Չարենցից իմ հեռացումը: Այն ունեցել է նաև զուտ ստեղծագործական հիմնավորում: Մեր գրական ուղիները միշտ ընթացել են ինքնուրույն և առանձին, ինչը երևում է մեր գրքերից» (Ա. Բակունց, Ժառանգություն, Ե., «Զանգակ», 1999, էջ 96):

Թեև այստեղ քաղաքական երանգ կա խոսքի մեջ, որը Բակունցը հանուն ինքնարդարացման կամենում էր ցուցադրաբար բացահայտել, բայց ըստ էության ևս ամեն ինչ այդպես էր: Այս տարբերությունը Բակունցի «Մթնաձորի» կապակցությամբ գրած բանաստեղծության մեջ շեշտել է նաև Չարենցը: Նրանց գրական հայացքները մասնակիորեն մերձեցան 1930-ական թթ.՝ շրջադարձ դեպի պատմությունը, Աբովյանի կերպարի պատմափիլիսոփայական բացահայտում: Այդուհանդերձ՝ նրանց գրական ինքնությունների տարբերությունը վիթխարի էր: Երկու տարբեր անհատականություն, երկու տարբեր գրող: Բայց կարևորն այն է, որ ժամանակի գրականության պատմության մեջ նրանք ընկալվում են ոչ այնքան իրենց տարբերություններով, որքան միասնությամբ: Տարբերությունը նշելը հեշտ է, որովհետև ակնհայտ է, դժվարը միասնության բանալին գտնելն է: Իսկ այդ միասնությունը կա, և դրա հիմքը ժամանակին ուղղված նրանց գեղագիտական դավանանքի ընդհանրությունն է: Դրա նախապայմանը ժամանակի և նույն ժամանակի մարդու ներաշխարհի բացահայտումն է: Գեղագիտական նույն խնդիրը լուծվում է տարբեր ճանապարհներով: Խորքում և՛ ժամանակի, և՛ գրականության հերոսի կշռաչափը, ի վերջո, հեղինակն է՝ ծագումնաբանական-ինքնակենսագրական մանրամասներով: Յուրաքանչյուրն իր նյութը քաղում է իր իմացած աշխարհից, իր ապրած միջավայրից: Սրանք նաև գրականության ծագումնաբանական որոշիչներ են, ինքնագտնման և ինքնաամբողջացման նախադրյալներ: Չարենցն իր գրական հերոսին տանում էր դեպի աշխարհ, իսկ Բակունցն աշխարհը տեսնում էր իր հերոսի մեջ:

Մթնաձորի ասքը Բակունցն սկսում է այսպես. «Մի ուրույն աշխարհ է Մթնաձորը...» («Մթնաձոր»): Այնուհետև. «Մրոցը մի ուրույն աշխարհ է...» («Մրոց»): Բակունցն այս ասում ու դիմացինի առաջ «բացում էր գյուղի հազարամյա գիրքը...» («Մինա բիբին»): Այդ հազարամյա գրքի էջերը ժամանակի ընթացքում գրվել են լռության մեջ, այդ գիրքը ոչ միայն բացող, այլև հիշող չի եղել, էլ ո՛ւր մնաց՝ ընթերցող ու հասկացող: Եվ հիմա գրողն այդ «ուրույն աշխարհն» է ներկայացնում աշխարհին և այդ «ուրույն աշխարհով» հավասարակշռում գրականությունն չդարձած իրականությունը:

Բակունցի աչքն իր ապրած իրականության մեջ տեսնում էր այն, ինչն այդպես եղել էր դարեր առաջ ու այդպես էլ պահպանվել: Ինքը հիշում էր հայ միջնադարյան ժամանակագրությունները. այդ հետադարձ հայացքը պատահական չէր: Ընդհանրությունը բացահայտ է և ակնհայտ, ուստի դիմում եմ ընդարձակ մի մեջբերման Թովմա Արծրունու և Անանունի «Պատմություն Արծրունյաց տան» գրքից. «Այստեղ մի փոքր ցույց տամ լեռան բնակիչների որպիսությունը՝ թե ինչպիսին են և կամ ովքեր են, ինչպես են նրանք ծանր աշխատանքով և սաստիկ տառապանքներով ձեռք բերում իրենց ապրուստը և բավարարում իրենց սննդի պետքերը: ➥ էջ 6

Մեր երկրի սահմանները նշագծված են եկեղեցիներով, կամ՝ Տաճար տանող ճանապարհը

Հարցազրույց արվեստաբան-նկարիչ Լևոն Լաճիկյանի հետ

— Պարոն Լաճիկյան, ապրիլի 26-ից մայիսի 10-ը Թեքեյան մշակութային կենտրոնում կայացավ Ձեր գրաֆիկական աշխատանքների ցուցահանդեսը՝ «Գյումրի և ավելի» խորագրով: Դա Ձեր որերորդ ցուցահանդեսն է, և կմանրամասնեք ներկայացված աշխատանքների մասին:

— 18-րդը... Առաջին անգամ էր, որ իմ ստեղծագործական բոլոր երեսակները միավորվել էին մեկ տեղում: Վենետիկ, Գյումրի, հետո Պոլիս, բայց այդ բոլորը բաժան-բաժան էին, մի տեղ մեկն էի ցույց տալիս, մի այլ տեղ՝ մյուսը: Այդ ընթացքում իմ քաղաքի եկեղեցիներից՝ Յոթ վերքը, հետո՝ Ամենափրկիչը, սկսեցի գործունեությանս երրորդ հանգրվանը: Հետո ուր գնում էի, եկեղեցու զանգերի ղողանջը ինձ մոռացնում էր, թե ուր եմ: Տաճար տանող ճանապարհն ինձ միշտ ուղեկցել է: Հոգևորի նկատմամբ կենտրոնացումս ծննդավայրի ժառանգություն է, որովհետև Գյումրիում բոլորը եկեղեցու հանդեպ ակնածանք ունեն՝ ի տարբերություն Երևանի և այլ քաղաքների: Ես մեծացել եմ տատիկիս աղոթքների ներքո, եկեղեցին միշտ եղել է մեր հոգևոր տունը:

Այս ցուցահանդեսում միավորվեցին երեք երեսակները: Առանցքը Գյումրին էր, ուր ծնվել ու հասակ եմ առել, մյուսն աշխարհի տարբեր քաղաքներն էին՝ Փարիզը, Վենետիկը, Նյու Յորքը, Վիեննան.... Դրանք դեմ դիմաց էի դրել, որպեսզի Գյումրին պատկերանար այդ համադրության մեջ և չխեղճանար բնավ, որովհետև ավելի գեղեցիկ է, քան շատ քաղաքներ: Երրորդ բաղադրիչը եկեղեցապատումն էր՝ և՛ հայաստանյան, և՛ արտերկրի: Ակամայից է այդպես ստացվել: Երբեք չեմ մտածել սկզբում նկարել, օրինակ, Գյումրին, հետո՝ հաջորդը. դրանք ճանապարհի ընթացքում են ստեղծվել: Եկեղեցիների շարքն էլ բավական տարողունակ է՝ մոտ 40 եկեղեցի: Միակը, որտեղ չեմ եղել, բայց նկարել եմ, Սինգապուրի հայկական եկեղեցին է, որն այդ երկրի հոգևոր ամենահին կառույցն է:

— Ցուցադրված աշխատանքների առանցքը գյումրիապատումն է: Ձեր գծանկարները սիրո արտացոլում են առ ծննդավայր: Գյումրիի ի՞նչն եք ամենաշատը սիրում. ճարտարապետությունը, պատմությունը, մարդկանց, Ձեր տունը կամ փողոցը....

— Սիրում եմ քաղաքային միջավայրը և այդ միջավայրի ծնունդ մարդկանց: Այն արհեստական միջավայր չէ, այլ ավանդական քաղաքային մշակույթ: Քաղաքային մշակույթի առումով (զուտ հայկականը նկատի ունեմ) Հայաստանում առանձնանում են Գյումրին և Գորիսը: Միշտ ասում եմ՝ ես ընդամենը բնակվում եմ Երևանում, բայց ապրում եմ Գյումրիում և Գյումրիով:

Գյումրեցիները շատ են սիրում իրենց քաղաքը: Երանի եմ տալիս, որ մեր երկիրը սիրեինք այնպես, ինչպես գյումրեցիներն իրենց քաղաքն են սիրում: Երեք տեղ դասավանդում եմ՝ Երևանում, Իջևանում և Գյումրիում: Շաբաթս կիսով չափ անցկացնում եմ Գյումրիում: Մեր Մկրտչյանն ասում էր՝ հաճախ Գյումրի եմ գնում, որ հումորի զգացողությունը չկորցնեմ: Իսկ ես գնում եմ, որպեսզի բարբառս վերագտնեմ, մերոնց հետ շփումից ուժ ստանամ: Գյումրին ինձ համար անվերջ վերադարձի տեղ է: Սոցիալական առումով աղքատ է, բայց մարդիկ հոգեպես հարուստ են, ինքնաբավ...

— Կնշե՞ք Գյումրու մի անկյուն կամ մի վայր, որը յուրահատուկ նշանակություն ունի Ձեզ համար, և որի հետ կապված հուշեր ունեք:

— Ոչ թե մի անկյուն, այլ անկյունների մի աբողջ շղթա կարող եմ նշել՝ Կումայրի պատմամշակութային արգելոց-թանգարանը: Երևանում մինչև օրս կան շենքեր, որոնց վրա գրված է՝ պահպանվում են պետության կողմից, բայց հատուկենտ շենքեր են: Մեծ, խելացի քայլ էր, որ Գյումրիում արվեց 1982 թվականին. ստեղծվեց Կումայրի պատմաճարտարապետական արգելոցը, որը 1000 հա տարածք է՝ 1600 կառույցով, որոնց մոտենալու և դիպչելու իրավունք չկա: Այդպես պահպանվեց հին Գյումրին:

— Ինչպե՞ս կբացատրեք այն փաստը, որ Գյումրին մշտապես կարողացել է արվեստներ զարգացնել, տաղանդավորներին կատարելագործվելու հնարավորություն տալ ու մեծաթիվ արվեստագետների նվիրել Հայաստանին:

— Այդ հարցն ինձ միշտ է հետաքրքրել: Հենց իմ նշած քաղաքային անխաթար միջավայրն է պատճառը, գյումրեցու ավանդապահությունը, ավելին՝ ավանդապաշտությունը, պահպանողականությունը՝ լավ իմաստով, և քաղաքն իրապես սիրելու հատկությունը: Եթե ուզում ես գյումրեցուն անձնապես վիրավորել, հայհոյիր նրա քաղաքը, և նա կպաշտպանի: Նույնը չեմ զգացել երկրի որևէ այլ տեղում: Կարող եմ Երևանում գոռալ՝ սա ի՞նչ քաղաք է. ոչ մեկը չի մոտենա և ասի՝ լսի՛ր, մեր Երևանի նմանը չկա: Երևանում ապրում են ոչ երևանցիները: Այստեղ այդպես էլ չձևավորվեց երևանցու կերպարը, դրա համար էլ, խնդրեմ, քաղաքի վիճակն այսօր. բարձրահարկերի անհասկանալի առատություն, սնկային քաղաք: Գյումրին, շնորհիվ պահպանողականության և նաև միջավայրի կայունության, կազմավորում է գյումրեցու բնավորությունը: Գյումրին Արևմտյան Հայաստանի մոդելն է: Էրզրումում, Կարսում եղել եմ և նույն զգացողությունն եմ ունեցել, ինչ Գյումրիում: Այո՛, հայի նկարագրի ձևավորման լավ օջախ է: Նայում եմ այս կամ այն դպրոցին, շատ հին, գեղեցիկ շենք է, և այդ դպրոցը ելումուտ անողի, նույնիսկ ծույլ աշակերտի ճաշակ է ձևավորում: Այստեղից՝ բազմաթիվ գրողներ, նկարիչներ, մարզիկներ: Ավանդույթի ուժն է դա:

— Վերջին ցուցահանդեսում առաջին անգամ ներկայացվեց նաև Ոսկեպարի Ս. Աստվածածին եկեղեցու գծանկարը: Նո՞ր եք նկարել՝ վերջին իրադարձություններով պայմանավորված, թե՞ վաղուց էիք այն ստեղծել:

— Ոսկեպարում չէի եղել: Վերջին իրադարձություններից առաջ մտածեցի, որ պետք է անպայման գնամ ու տեսնեմ: Երբ գնաք, մանավանդ այս եղանակին, կթվա՝ իդիլիկ վիճակ է, հովվերգական, բայց գիտեի, որ ընդամենը՝ արտաքնապես: Ես Ոսկեպարն ընկալեցի տագնապի շեշտերով և նկարեցի հպարտ միայնության մեջ, որ գոչում էր՝ ես այստեղ եմ: Հողմերը կանցնեն, մարդիկ կանցնեն, գծագրողներն ու նշագրողները կանցնեն, հենասյուն տնկողներն էլ, բայց ինքն անսասան է՝ հայոց արմատը՝ ի դեմս եկեղեցու:

— Վերջին անգամ ե՞րբ եք եղել այդ եկեղեցում և Տավուշում: Ի՞նչ մտորումներով էիք այնտեղ:

— Տավուշում ամեն շաբաթ եմ լինում. Իջևանի համալսարանում դասավանդում եմ: Գործի բերումով կապը շատ զորեղ է: Ցուցահանդեսի ժամանակ էլ նշեցի, որ հիմա ինչ-որ սահմանաբաժանումներ են անցկացնում, սյուներ են տնկում, անհասկանալի քարտեզներ են բերում: Իմ խորին համոզմամբ՝ մեր երկրի սահմանները նշագծված են եկեղեցիներով: Ոչ մի քոչվոր ազգ, եթե այդտեղ մնայուն չի ապրել, իր կառույցները չի ստեղծել: Եթե 7-րդ դարից մենք Ոսկեպարում եկեղեցի ունենք, ես չեմ հասկանում՝ ի՞նչ քարտեզի մասին է խոսքը, ո՞ւմ ենք ինչ ապացուցում, մենք մե՞զ: Եկեղեցին ինքնին ապացույցն է հայի գոյության: Թշնամին Արցախը գրավելուց հետո առաջին արշավը հենց եկեղեցու դեմ արեց, խաչքարերի դեմ: Մեր գոյության խարիսխն ու վկայությունն են հոգևոր կառույցները: Դրա համար էլ թշնամին առաջինը դա է փորձում վերացնել:

— Դուք խորը ուսումնասիրել եք հայկական ճարտարապետությունը: Կխնդրեի ամփոփ նկարագրել՝ ինչպիսին է մեր ազգային և եկեղեցական ճարտարապետությունը: Եվ արդյո՞ք այսօր այն կենդանի է, թե՞ մենք սկսել ենք կրկնօրինակել օտարներինը:

— Բարդ հարց է: Հայկական ազգային ճարտարապետությունն սկսում է քրիստոնեության ընդունումից հետո, մինչ այդ եղել են ուրարտական շրջանը, հելլենիստականը: Այդ ժամանակվա ճարտարապետության մեջ հայկական տարրեր եղել են, բայց ընդհանուր առմամբ մերը չեն դրանք: 301—303 թվականներին էր, որ հայկական ազգային ճարտարապետության նշաձողը եղավ Էջմիածնի Մայր տաճարը: Նույնիսկ «գմբեթ» հասկացությունն առաջին անգամ հայկական ճարտարապետության մեջ է կիրառվել: Այսինքն՝ քրիստոնեական Մայր տաճարը ոչ թե առաջիններից է, այլ քրիստոնեական առաջին տաճարն է: Սա ասում եմ աներկբա, որովհետև հունական բազիլիկները եղել են բասիլևսների շենքեր, չեն եղել եկեղեցիներ: ➥ էջ 7

Էոյուդ երեխաների, դաշնամուրի և Հայաստանի մասին

Երկրագնդի հեղինակավոր և առաջատար համալսարաններից շատերը՝ Օքսֆորդ, Քեմբրիջ, Հարվարդ և այլն, չունեն լրագրության ֆակուլտետներ կամ բաժիններ: Բացատրությունն այն է, որ լրագրությունում չկան օբյեկտիվ գիտելիքներ, որոնք փոխանցելու, սովորեցնելու համար ակադեմիական ծրագիր հարկավոր լինի: Կան նաև այնպիսի համալսարաններ՝ այդ թվում Երևանի պետական համալսարանը, որոնք ընդհակառակը՝ ունեն լրագրության ֆակուլտետներ, սովորեցնում են լրագրություն և առաջին հերթին այն, որ լրագրությունում գոյություն ունեն տեղեկատվական, հրապարակախոսական և գեղարվեստական ժանրեր, և պրոֆեսիոնալ լրագրությունն սկսվում է դրանց սահմանների ու կանոնների իմացությունից:

Կյանքում գրած լինելով երևի հազարավոր լրագրողական նյութեր՝ գերազանցապես հրապարակախոսական ժանրերում, ավելի քիչ՝ տեղեկատվական, ես կդժվարանամ գոնե մեկ-երկու տասնյակ նյութ մտաբերել, որ գրած լինեմ գեղարվեստական ժանրերում: Դրանք պտտվում են մեկ առանցքի շուրջ՝ ով կամ ինչ, այսինքն՝ կենտրոնականն անձն է, ինչն էլ ստեղծում է խնդիր: Մի կողմից գաղափարները և իրադարձություններ թողած՝ անձերին քննարկելը, որքան էլ տարածված և պահանջված լինի, միևնույն է, մակարդակ է, որին հարիր չէ իջնել: Մյուս կողմից, ինչպես Չարլի Չապլինն է գրել դստերը՝ Ջերալդինային, որքան էլ անձն արժանավոր լինի, միշտ էլ կգտնվեն նույնքան արժանավորները, որոնց պարզապես բախտը չի ժպտացել, կյանքը չի բարձրացրել... Հետևաբար, որքանո՞վ է արդարացի մեկին առանձնաշնորհյալ վերաբերվել:

Եվ այսքանից հետո, ինչպես հայտնի ասացվածքն է խրատում. «Երբեք մի ասա՝ երբեք»: Ամեն ինչ սկսվեց մի 12–13 տարեկան երեխայից, որին նկատեցի Կարեն Դեմիրճյանի թանգարանում Թանգարանային գիշերվա միջոցառմանը: Ինչն էր ուշագրավ այդ երեխայի մեջ: Կեցվածքը, արտաքինը, շարժումների վայելչությունը... Այդ երեխային նայելիս թվում էր՝ վիեննական Հոֆբուրգ պալատում ես կամ Շոնբրունում: Ի լրումն ամեն ինչի՝ երեխան դիմագծերով էլ նման էր կայսրուհի Սիսիին, ինչպես նրան գիտենք պատանեկության տարիների նկարներից (Ավստրիայի Էլիզաբեթ կայսրուհի (1837–1898): Հետո շատերին եմ կեսկատակ-կեսլուրջ ասել, որ եթե մեր այս «արքայադուստրը» մի քանի տասնամյակ առաջ ծնված լիներ, և "Sissi" ռեժիսորներն իրեն հանդիպեին, գոնե «Sissi. երիտասարդ կայսրուհին» հատվածում Ռոմի Շնայդերի փոխարեն, վստահաբար, իրեն կնկարեին: Շնայդերն ակնհայտ խաղում է, իսկ մեր այս երեխան մարմնացյալ պատանի Sissi է:

Մինչ մտածում էի պարզել՝ ով է այդ փոքրիկ «արքայադուստրը», արդեն ծանոթացրին: Պարզվեց՝ անունը Անահիտ Շահնազարովա է, սովորում է Երևանի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցում, դաշնակահարուհի է, այս տարի ավարտում է և տեղափոխվում Չայկովսկու անվան դպրոց: Դեմիրճյանի թանգարանում էր հայրիկի՝ Միքայել Շահնազարովի ֆիլմի և լուսանկարների ցուցադրության կապակցությամբ: Անահիտը ծնվել է Մոսկվայում, հայրը հայ է, մայրը՝ ռուս, բայց մայրիկն է Երևան այցելելուց հետո որոշել, որ ինքն այլևս Երևանից չի հեռանա, ու որոշիչ դեր կատարել, որ ընտանյոք տեղափոխվեն Հայաստան: Անահիտը Երևանում է գնացել առաջին դասարան և ասում է՝ «Ես իսկական հայուհի եմ»: Ծիծաղեցի և չդիմացա, որ չասեմ. «Փոքրի՛կ ջան, դու ոչ միայն իսկական հայուհի ես, այլև բացառիկ հայուհի ես, որովհետև դու նաև ավստրիական արքայադուստր ես, երբ մեծանաս, Հաբսբուրգների արքայատունն իմանաս, Վիեննայում շրջագայես, կհամոզվես...»: Անահիտն Ավստրիայում դեռ չի եղել, բայց եղել է ԱՄՆ-ում, Ռուսաստանում, սակայն ամենից շատ սիրում է Հայաստանը: Հայաստանում շատ է շրջագայել, որովհետև երբ ժամանակը թույլ է տալիս, միանում է հայրիկի նկարահանումներին: Իր սիրած կոմպոզիտորներն են Բեթհովենը, Ռախմանինովը, Խաչատրյանը, Կոմիտասը, և երաժշտությունից բացի՝ սիրում է նկարչություն, ավելի ճիշտ՝ նկարել: Կյանքի ծրագրերը, որ այս պահին ունի, մեծ դաշնակահարուհի դառնալու շուրջ են: Դատելով իր կատարումներից, փառատոներին մասնակցությունից՝ այդ ուղու վրա է:

Հետո մի-երկու շաբաթվա տարբերությամբ նույն Դեմիրճյանի թանգարանում մի ուրիշ երեխա ուշադրությունս գրավեց, այս անգամ իր երաժշտական կատարումով: Արամ Խաչատրյանի «Տոկատան» նվագեց այնքան հաջող, որ սկսեցի հետաքրքրվել՝ ով է: Փոքրիկ դաշնակահարուհու անունը Արիանա Դարյան է, հետո իմացա, որ դարձյալ Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցից է՝ Անահիտի համադասարանցին: Արիանան էլ Հայաստանում չի ծնվել, ծնվել է Միացյալ Նահանգներում, երեք տարեկանում է տեղափոխվել Հայաստան: Արդեն հասցրել է լինել ԱՄՆ-ում, Ռուսաստանում, Իսպանիայում, Կիպրոսում, բայց ամենից շատ սիրում է Հայաստանը, հետո՝ Իսպանիան: Կոմպոզիտորներից սիրում է Բախ, Ռախմանինով, Խաչատրյան, նույնիսկ Ալեքսանդր Հարությունյան գիտեր: Դպրոցական առարկաներից նաև ֆիզիկան և մաթեմատիկան է սիրում: Հետո իմացա, որ Արիանայի այդքան հրաշալի և հաջողված դաշնամուրային կատարումը, որ ինձ տպավորել էր, բացատրություն ունի. նա երաժշտական գերդաստանից է: Պապիկը դիրիժոր է եղել, տատիկը կիթառահար Մարիետտա Բադալյանն է, որին շատերը կմտաբերեն 90-ականների հայաստանյան հեռուստաէկրանից, երաժիշտներ են նաև Արիանայի մայրը, մորաքույրը... Այնպես որ երաժշտական կարիերան չի էլ քննարկվել, բնական ընթացք է, բայց Արիանային հաստատապես դաշնակահարուհի դառնալու ուղու վրա է կանգնեցրել Դենիս Մացուևի կենդանի համերգին ներկա գտնվելը: Մացուևի փոքրիկ երկրպագուհին է:

Քանի որ այս երկու երեխաները նույն դասարանից էին, իրենց մի այլ համադասարանցու հետ էլ պատահաբար ծանոթացրին՝ Անի Աբրահամյան, որը նույնպես Հայաստանում չէր ծնվել, ընդամենը մեկ տարի առաջ էր Հայաստան տեղափոխվել, նորից ապագա երաժիշտ է, բայց խմբավար (դիրիժոր): Իր սիրած հայ կոմպոզիտորն Առնո Բաբաջանյանն է, նույնպես շատ սիրում է Դենիս Մացուևին, բայց իր դիրիժորական փայտիկին չի դավաճանում, երաժշտական նախապատվությունների աստիճանակարգությունում նախ դիրիժորական փայտիկն է, հետո՝ դաշնամուրը: Սիրած դիրիժորն Արթուրո Տոսկանինին է՝ Ջիակոմո Պուչինիի մեծ բարեկամն ու օպերաների չգերազանցված մեկնաբանը: Սովորաբար կանայք առավելագույնը երգչախմբեր են ղեկավարում, արդյո՞ք Անին նվագախումբ կղեկավարի. պետք է հուսալ և տեսնել:

Իհարկե, մեր այս փոքրիկ երաժիշտները օժտված են և տաղանդավոր, բայց այդպիսին են նաև անվերջ թվով այլ երեխաներ այս աշխարհում: Ոմանց շնորհները բացահայտվում են կյանքում, ոմանց շնորհները՝ ոչ: Ոմանք հասնում են մեծարման և ճանաչման, այլք՝ ոչ: Ոմանք կարող են Վերդիի և Վագների նման սկզբում թերագնահատվել, հետո պարզվի՝ իրենց անձով և ստեղծագործությամբ երաժշտական դարաշրջան են սկզբնավորել: Հետևաբար, Անահիտի, Արիանայի և Անիի մասին գրելու իմ պատճառը երաժշտական տաղանդը չէր, այլ դրանից այն կողմ բացահայտվող մի որակ և փոփոխություն, որ այս երեխաները վստահաբար չեն էլ գիտակցում, բայց դա Հայաստանի ձեռքբերումն է և Հայաստանի մասին է խոսում: Հայաստանի անկախությունը ընդամենը 33-րդ տարին է բոլորում, բայց պատմության այդ ակնթարթը արդեն բեկում է նշանակել:

Անշուշտ, Հայաստանի պատմության խորհրդային շրջանը, խորհրդային իշխանությունների վարած մշակութային քաղաքականությունն է ստեղծել այն հարուստ ավանդույթները, կրթական բազան, որի վրա այսօր ձևավորում են մեր փոքրիկ երաժիշտներին: Սակայն Հայաստանի անկախության շրջանն է այս երեխաներին դարձրել ինքնավստահ, ամեն կրավորականությունից զերծ, աշխարհին հավասարի հայացքով նայող, որևէ հեղինակությունից անհիմաստ չընկրկող, իրենց ուժերին հավատացող և հաջողության հասնելը իրենցով պայմանավորող: Այնպես, ինչպես իտալացի, ֆրանսիացի, անգլիացի երեխան է լինում: Երեխաների այս լուսավոր ու հավասար հայացքը աշխարհին հիացնում է: Դա Հայաստանի անկախության ձեռքբերումն է, ընդամենը երեսուն տարվա ակնթարթում արձանագրված թռիչքն ու ապագա նվաճումների գրավականը: Իսկապես կեցցեն մեր երեխաները, և կեցցե անկախ Հայաստանը:

Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ակսել Բակունց —125

↩ էջ 5

Նրանք բնակվում են խոր ձորերում, լեռների փապարներում, անտառների թավուտներում և լեռների գագաթներին: Ապրում են առանձին, ազգատոհմերով և այնչափ հեռու են միմյանցից, որ եթե զորավոր տղամարդկանցից մեկը բարձր տեղից ուժգին բղավի, նրա ձայնի բոմբյունը հազիվ կարող է որևէ տեղ լսվել և տպավորություն է թողնում, թե արձագանք է ժայռերի միջից: Նրանց կեսը խոտորվել է հայրենի բնական լեզվից՝ հեռաբնակ լինելու պատճառով: Միմյանց հետ շփում չունեն. խոսում են իրար հետ կցկտուր և օտարոտի լեզվով: Եվ միմյանց հանդիպելիս այնքան խրթնախոս են ու անծանոթ, որ մինչևիսկ կարիք ունեն թարգմանների: Կերակրի պետքերի համար գործ են ածում ինչոր սերմեր, առավելապես կորեկ կոչվող բույսը, որ սովի ժամանակ ոմանք անվանում են հաց: Այդ սերմերը նրանք ոռոգում են ոտքերով՝ անտառների բացատներում կամ ցանում են երկմատանի փայտատներով: Իրենց մերկությունը ծածկելու համար հագնում են բրդյա շորեր. ոտնամաններ պատրաստում են կոշիկների ձևով՝ այծերի մորթուց: Ամառ թե ձմեռ բավարարվում են միևնույն սնունդով և միևնույն հագուստով: Լեռներում բնակվող գազաններից պաշտպանվելու համար ունեն աշտե զենքը, որ կրում են մշտապես: Երբ թշնամիները հարձակվում են իրենց երկրի վրա, լեռնականները միաբան գալիս են իրենց իշխաններին օգնության, քանզի տիրասեր են.... Հյուրասեր են, օտարընկալ և պատիվ տվող» (*Թովմա Արծրունի և Անանուն*, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1985, էջ 191–193):

Միջնադարում ապրեր, Բակունցն այս տողերն էր շարադրելու: Բայց քանի որ նրանը XX դարն էր, ուստի այս տողերն իրենց պատկերային գրեթե նույն բովանդակությամբ արտացոլվեցին մթնաձորյան ամբողջական համապատկերի մեջ:

Բնաշխարհից քամված, բարձրացված և մտավոր աշխարհ դարձած գեղարվեստին Բակունցը զուգադրում է հենց բնաշխարհում պահպանված պարզ կյանքը՝ իր դարավոր փորձով ու հազարամյա էությամբ: Բակունցը բացեց իր հերոսների ողբերգության վարագույրները: Դա մեկ որսորդ Ավիի ավերված արտաքինն է ու նրան ուղղված Պանինի դժոխային քրքիջը, մեկ սերունդների խզվող կապն է ու աստիճանական օտարացումը, այնուհետև՝ լքվող հայրենի եզերքը, մոռացության մատնվող հնավանդ ավանդույթները: Դա Սաքանի կռահած, բայց երբեք չունեցած բարձր սիրո ողբերգությունն է: Սերը հրեղեն ալիքով գալիս ու անցնում է նրա կողքից և նրա առջև բացում զգացումի ու իրականության խորացող անդունդը: Դա Խոնարհի ու քրմուհու նմանվող լեռնային գեղեցկուհու չասված սիրո, չապրած կյանքի լուռ ողբերգությունն է, որի մեջ նրանք ապրում են ոչ թե մի պահ, այլ մի ամբողջ կյանք ու հավիտենություն: Դա Դիլանի հիշողության տոնական պահն է, գողացած երջանկության մի ակնթարթ, որ նրան վեհացնում է կյանքի համատարած գորշության մեջ:

Այս ամենը «մեծ» աշխարհի կյանքն է «փոքր» աշխարհի մեջ: Այսինքն՝ այս ամենը մարդուն տրված կյանքն է, որ նույնն է թե՛ «մեծ» աշխարհում, թե՛ «փոքր» աշխարհում: Մարդը՝ բնազդից մինչև գիտակցություն, ավանդույթից դեպի քաղաքակրթություն: Մարդը՝ իր սկիզբով, շարունակությամբ ու ներկա վիճակով: Մարդը՝ անընդհատական շարժումով դեպի իր սկիզբը և դեպի իր վերջը: Բնազդի մեջ փակվածը միտվում է դեպի գիտակցություն, գիտակցական կյանքից հոգնածը՝ դեպի բնազդ: Սաքանի, Դիլանի, «Ալպիական մանուշակի» հնձվորի մեջ բնազդական կյանքը մի պահ դառնում է գիտակցական կյանք: Նույն ժամանակ մեծ աշխարհից հոգնած Վ. Տերյանի հերոսն այսպես էր երազում. «Լինեի չոբան սարերում հեռու...»:

Հակադիր երկու եզրերը խորքում միավորվում են, եթե ավելացնենք նաև երրորդ կողմը, որը հիմաստավորում և համակշռում է տարաբևեռ զարգացումները: Այս դեպքում բանաձևը կարտահայտվի նոր ձևակերպումով՝ աշխարհ–բնաշխարհ–ներաշխարհ: Ներաշխարհը երկու եզրերի միջուկն է: Այդտեղ է ճշտվում գրական նյութի գեղարվեստական բացահայտման արժեքը:

Գրականության և ընդհանրապես արվեստի ոլորտում ըստ էության գործում է մի դաժան օրինաչափություն: Որքան էլ գրականագիտությունը ջանք ու եռանդ գործադրի, միևնույն է, գրողն ու նրա ստեղծած աշխարհը մնում են մինչև վերջ և ամբողջովին չընկալված ու չհասկացված: Հակառակ դեպքում հարյուրավոր ուսումնասիրություններ չէին գրվի մեծ գրողների մասին: Այս չընկալվածության ու չհասկացվածության մեջ է գրողի և գրականության ողբերգությունը: Մինչև ընդերքը Բակունցի ստեղծագործության մեջ խորանալու դեպքում միայն հնարավոր է հայտնաբերել այն կարևոր հոգեբանական վիճակները, որոնք նույնադավան գեղագիտությամբ նրան դարձնում են Չարենցի գրական ժամանակակիցը:

Որքան հնարավոր է, գրողը (ստեղծողը) պետք է անընդհատ դեմ գնա հանրային ճաշակին, քանի որ հանրային ճաշակը ճահիճ է և նախասահմանված է քաղքենիների ու քաղքենիացող խավի համար: Այն, ինչ դարձավ հանրային ճաշակի չափանիշ, արդեն արվեստի մահն է, և պետք է ինչ գնով էլ լինի շարժվել առաջ: Հանրային ճաշակը մեր իրականության մեջ համակեպվում է ինչ-ինչ կեղծ արժեքների, ստեղծում կուռքեր և նրանց խնկարկելով՝ կործանում շատ ու շատ նոր գոյացումներ: Փոխվում է արժեքների համակարգը, և վերստին գործում է ծովի օրենքը. փրփուրը՝ երևացող մակերեսին, մարգարիտը՝ խորքում: Բայց ծովը նաև ուրիշ օրենք ունի, որ հզոր շառաչյունով դուրս է նետում իր մեջ լցված ամեն տեսակի աղբ ու աղտեղություն:

Չարենցն՝ իր ձևով, Բակունցն՝ իր ձևով, և երկուսը միասին ընդդիմության մեջ էին ժամանակի թե՛ պաշտոնական գաղափարախոսության և թե՛ հանրային ճաշակի դեմ: Ընդհանուր էր նրանց ոչ միայն ընդդիմությունը, այլև խոսքը շարժող գեղագիտությունը: Տարբեր էին միայն ուղղությունները, որոնք ևս մերձենալու նախադրյալներ ունեցան՝ իրենց ստեղծագործական կյանքի բախտորոշ պահին երկուսի հայացքներն էլ ուղղելով դեպի Խաչատուր Աբովյանի լուսավոր կերպարը:

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բ. գ. դ., պրոֆեսոր

Մեր երկրի սահմանները նշագծված են եկեղեցիներով

↩ էջ 5

Որպես զուտ հոգևոր կառույց՝ ճարտարապետական իր կերպարով, ստեղծվեց Էջմիածնի Մայր տաճարը: Մեր ազգային ճարտարապետության հիմքը հոգևոր պաշտամունքային ճարտարապետությունն է, որ ծնունդ տվեց նաև պալատներին: Եթե դիտարկենք մեր պալատները, դրանք ավելի շատ ամրոցներ են: Պայմանավորված մեր անկյալ վիճակով ու թշնամիների հարձակումներով՝ մենք աշխարհիկ, պալատական ճարտարապետություն չենք ունեցել, կամ եթե ունեցել ենք, չի պահպանվել:

Կյանքը փոփոխվում է, անփոփոխը, մեզ չափանիշ թելադրողը, մնայունը մեր եկեղեցիներն են, սակայն ես հակված չեմ այն կարծրացած մտայնությանը, որ մենք մնանք անցյալում, 21-րդ դարն է, աշխարհը շարժվում է առաջ, և մենք էլ պիտի ժամանակին համընթաց գնանք:

Իսկ ընդհանուր քաղաքաշինության ոլորտում մենք տեղում դոփում ենք: Քաղաքաշինության մեջ մենք ոչ մի նոր բան չենք ավելացնում: Եվ եթե այդ նորույթը բարձրահարկերի տեսքով է, ապա, ներողություն, գնացեք Նյու Յորքն ու Չիկագոն տեսեք: Ցավոք, այսօրվա ճարտարապետությունը, որպես մասնագետի կարծիք ընդունեք կամ գեղագետի, ինձ, մեղմ ասած, չի գոհացնում: Ափսոսանք եմ հայտնում, որ մեր մեջ չգտանք ավանդականի ու արդիականի համադրությունը, մի բան, որ արեց Ալեքսանդր Թամանյանը. նայեք Հանրապետության հրապարակի և Օպերայի շենքերին, մեր միջնադարյան կավե ամրոցների օրինակով են: Ժամանակակից շեշտադրումներ մտցրեց նաև Ստեփան Քյուրքչյանը: Նրանցից հետո, փաստորեն, դեռ չի եկել այն մեծագույնը, որը կարող է ճարտարապետության մեջ նոր ուղղություն բացել: Թամանյանից ու նրա աշակերտներից հետո այսօր էկլեկտիկ շրջան ենք ապրում, ու դրա վառ օրինակն այսօրվա անհասկանալի Երևանն է:

— Դուք հիմնականում քաղաքային տեսարաններ եք նկարում՝ ձեռք բերելով «քաղաքերգակ» նկարչի համբավ: Որտեղի՞ց է գալիս Ձեր հետաքրքրությունն ու սերը քաղաքային ճարտարապետության հանդեպ:

— Իմ արմատներից, որովհետև պապերիս պապերը Էրզրումից էին, որն ավանդական քաղաք է եղել: Կարս, Գյումրի՝ քաղաքների քաղաք. երևի իմ մեջ ապրում են: Ես գյուղը շատ եմ սիրում, նույնիսկ նախանձում եմ գյուղում ապրողներին, դա ինձ համար իդիլիա է, հովվերգություն է, բայց.... Երևի իմ քաղաքային ծնունդ լինելն է հիմնական պատճառը:

— Գրականությունից անցումը նկարչության ինչպե՞ս ստացվեց: Ո՞րն եք համարում Ձերը. առավել հոգեհարազատ է գրե՞լը, թե՞ նկարելը:

— Տասը գիրք ունեմ: 1990-ականների մութ տարիներին դժվար էր ապրելը: Կյանքս իմաստավորելու համար որոշեցի լրագրությամբ զբաղվել, որը թույլ էր տալիս տարբեր ոլորտներում լինել: Իմն արվեստն էր անշուշտ: Համալսարանում էի աշխատում, դաս չկար, լույս չկար, բայց հույս կար: Սկսեցի աշխատել «Ազգ» թերթում՝ որպես մշակութային մեկնաբան: Երեք տարի աշխատեցի, ամեն օր հոդված էի հրապարակում՝ մոմի լույսի ներքո: Իսկ նկարելու հակում ունեցել եմ փոքրուց. ընտանիքս է «նկարչական»: Հայրս նկարել է,



եղբայրս անվանի նկարիչ դարձավ: Ես մտածում էի՝ շատ կլինի՝ բոլորը նույն ճանապարհով գնան, և զբաղվում էի ավելի շատ արվեստի տեսությամբ: Ինձ փիլիսոփայությունն էր հետաքրքրում: Զբաղվում էի նաև Մխիթարյան միաբանության պատմությամբ: Ինձ հրավիրեցին Վենետիկի Սբ. Ղազար կղզի: Գնացի, եկա և Վենետիկի մասին փոքրիկ ուղեգրություն գրեցի «Ազգի» համար: Գրությունս ուղեկցեցի մի գծանկարով. կոչվում էր «Հառաչանքի կամուրջը»: Բոլորի ուշադրությունը գրավեց, ասում էին՝ ինչ լավ ես նկարել: Առաջինը Վենետիկն էր, հետո սկսեցի Գյումրին նկարել: Դրանք առիթ ունեցա ցույց տալու եգիպտահայ նկարիչ Հակոբ Հակոբյանին: Զարմացած ասաց՝ դո՞ւ կգծես: Պատասխանեցի՝ այո՛: Ասաց՝ Լա՛ռն, դու լավ կգրես, բայց գծիդ մշակույթը շատ լավն է, շարունակիր: Հակոբ Հակոբյանի այդ հորդորն ինձ ոգևորեց: Հետո առաջարկեց, որ Վենետիկի մասին գիրքս միայն գծանկարներով լինի: Մոտ երկու տարի գծանկարները պատրաստեցի, մինչև հայտնվեց գրքի հովանավորը՝ Ամերիկայից: Գիրքը լույս տեսավ գծանկարներով և ունեցավ շատ մեծ հաջողություն, ստեղծագործական կյանքս բեկվեց: Հակոբ Հակոբյանի այդ գնահատականից հետո համարձակվեցի ներկայանալ նաև որպես գծանկարիչ: Պարզապես եղբայրս այնքան երևելի է, որ ես նրա կողքին... Իրենից պետք է թույլտվություն խնդրեի. թույլատրեց՝ ասելով, որ դա էլ քո ուղղությունն է, ինչո՞ւ ոչ, շարունակիր: Առաջին ցուցահանդեսս 2006-ին էր: Չորսը տարի նկարելուց հետո որոշեցի ներկայանալ հանրությանը: 2010-ին Գորիսում էր առաջին անհատական ցուցահանդեսս, և շատերի համար գրավիչ էր: Նույն տարում համարձակվեցի «Նարեկացի» արվեստի միությունում ցուցահանդես ունենալ: Գյումրիում չէի համարձակվում, բայց տարեվերջին որոշեցի այնտեղ էլ ցուցադրել գործերս: Ոգևորությունս ու համարձակությունս արդեն սահմաններ չունեցան, սկսեցի արդյունավետ ստեղծագործել՝ գրելուն զուգահեռ: Նկարչությունն այլևս անբաժան էր ինձնից: Սկզբում եթե նախասիրություն կարելի էր համարել կամ դրա պես մի բան, հետո դարձավ հիմնական զբաղմունքս: Հաջորդեցին արտասահմանյան ցուցահանդեսները՝ Նյու Յորքում, Նյու Ջերսիում և այլուր: Ինձ համար նշանակալի էր նաև 2022 թ. Մայր Աթոռի՝ պատի օրացույցը, որի 12 թերթերը նկարազարդեցի Տ. Արարատ քհն. Պողոսյանի նախաձեռնությամբ ու պատվերով....

— Իսկ երբևէ մտածե՞լ եք, որ կարող էիք ճարտարապետությամբ կամ քաղաքաշինությամբ զբաղվել:

— Որ ասեմ՝ իզուր ճարտարապետ չդարձա, չէ, չի եղել: Ընդամենը գոհացել եմ ճարտարապետությամբ հիանալով: Եթե ես ճարտարապետական շինություններ եմ նկարում, նպատակս ոչ թե կադաստրի վերածելն է, քանի որ դրա համար լուսանկարչություն կա, այլ գեղեցիկի իմ ընկալումն ուրիշներին փոխանցելը: Եվ, իհարկե, արածս որպես զուտ նկարչություն չեմ ընդունում: Ինչի՞ համար է մարդ նկարում, եթե դա արդեն կա: Պիտի կարողանաս քո գծերի միջոցով սիրել տալ տվյալ շինությունը: Ես Գյումրին եմ սիրել տալիս, հայկական եկեղեցին: Նաև մղում եմ մտածելու այդ շինության բովանդակության մասին, ճանաչելու այն: Իմ նկարչությունը ճանաչողության դրդող միջոց է: Եթե տասը տարի առաջ Գյումրիի հանդեպ այսպիսի սեր չկար, իսկ

հիմա համընդհանուր սեր է վայելում, ես էլ իմ համեստ նպաստն եմ ունեցել: Արվեստն ընդհանրապես և նկարչությունը մասնավորապես ինձ համար ինքնանպատակ չեն, ոչ էլ «պարապ վախտի» խաղալիք: Արվեստը միջոց է, ուղի դեպի ճանաչողությունը և ո՛չ նպատակ, որպեսզի մարդկանց մոտեցնես պատմությանը, ներկային, ինչ-որ տեղ նաև տանես դեպի ապագա:

— Ձեր գծանկարներում գույները բացակայում են: Հիմնականում մի գույնով եք նկարում. ո՞րն է պատճառը:

— Գույները խանգարում են իմ ընկալմանը: Ես ուզում եմ շեշտել լույսի ու ստվերի դասական խաղը, քանի որ հենց դա է արվեստի հիմնական գաղտնիքը:

— Դուք ուսումնասիրել ու նկարել եք նաև աշխարհի տարբեր քաղաքների ճարտարապետական կարևոր ու խորհրդանշական շինություններ: Ո՞րն է Ձեր սիրելի քաղաքը՝ Հայաստանից դուրս և ինչո՞ւ:

— Պոլիսը: Պոլսում դարձյալ քաղաքային մշակույթ հայտնաբերեցի: Վերջին գիրքս հենց Պոլսի մասին է և Պոլսում էլ տպագրվեց: Ինձ հարցնում են՝ հայկակա՞ն է Պոլիսը: Ասում եմ՝ հետաքրքիր է՝ թուրքական բան այնտեղ գրեթե չկա, ամբողջը բյուզանդական է: Պոլսում ինչքան գեղեցիկ շենք կա, հայ ճարտարապետների գործն է: Տարօրինակ կթվա, բայց կարծես ուզում ես հիվանդանալ, որ գնաս բուժվես Սուրբ Փրկիչ հիվանդանոցում: Երբ ես եղա Շիշլիի հայոց գերեզմանատանը, նույնիսկ մտածեցի. «Պոլսո Շիշլիի հայոց գերեզմանատուն այցելելուց հետո մահն այլևս սարսափելի չի թվում»: Ես նաև այնտեղի մզկիթներն եմ նկարել, ինչպե՞ս չնկարել: Դրանցից մեկը՝ Վալիդե սուլթան մարմարակերտ մզկիթը, Պալյանների սարքածն է: Հպարտ եմ քայլել, քանի որ իմոնք են ստեղծել քաղաքը: Թուրքերը եկել են այնտեղ, էլի չեն կարողացել ճարտարապետ գտնել, Մուշից կանչել են հայ շինարարների: Այդ քաղաքի եվրոպականացման դերը տարել են Պալյանները: Քաղաքի ռամական ուսումնարանն ու Դոլմաբաղչեն էլ են իրենք սարքել: Պոլսից ես հայկական մեծ շունչ եմ առնում:

— Ձեր աշխատանքների հիմնական բաղադրիչը գիծն է, այն էլ՝ ուղիղ գիծը, իսկ ժամանակակից ճարտարապետության մեջ, օրինակ՝ դեկոնստրուկտիվիստական ոճում, մենք այդ ուղիղ գծերը չենք տեսնում, դրանք աստիճանաբար անհետանում են, և փոխարինում են կոր գծերը: Ինչպե՞ս եք վերաբերվում ճարտարապետական ժամանակակից ոճերին:

— Եթե ես «մեղադրվեմ» ուղիղ գծերի հանդեպ թուլության համար, այնքան էլ ճիշտ չէ, բայց, այո՛, հիմնականում ուղիղ գծերով ճարտարապետությունն եմ նկարել: Բայց, օրինակ, Անտոնիո Գաուդիի ամբողջ ճարտարապետության մեջ, որն ուսումնասիրել եմ, սակայն դեռ Բարսելոնայում չեմ եղել ու չեմ տեսել, ոչ մի ուղիղ գիծ չկա: Եթե բախտը ժպտա և այնտեղ հայտնվեմ, Գաուդիի ամբողջ ճարտարապետությունն եմ նկարելու: Գաուդին ուսումնասիրել էր բնությունն ու նկատել, որ բնության մեջ ուղիղ գծեր չկան: Նա հենց այդ սկզբունքն է օգտագործել իր ճարտարապետության մեջ: Ինչքան էլ Գյումրին ու Հայաստանը շատ սիրեմ, բայց ամենևին հակված չեմ այն մտայնությանը, որ մենք աշխարհի ճարտարապետության ակունքն ենք: Չէ, պարզապես առաջին քրիստոնյա ազգ լինելը մեզ մղեց քրիստոնեական հավատքի ուղղագծին հետևել, այդ գծով շարունակել: Եվ ամբողջ ճարտարապետությունը, արվեստը մեր հոգևորի հետ գրկախառն զարգացավ:

Եթե հայտնվեմ Չինաստանում, Ճապոնիայում, Հնդկաստանում, մեծ սիրով բուդդայական տաճարներն էլ կնկարեմ: Ինձ համար ապրելու և մարդ լինելու հաճույքը հենց բազմազանության մեջ է: Աստված այսքան ազգերը պատահական չի ստեղծել:

— Դուք նաև գեղագետ եք: Ինչպե՞ս կբացատրեք գեղեցկությունը: Ո՞րն է Ձեզ համար գեղեցիկը:

— Գեղեցիկը գեղեցիկ է այնքանով, որքանով անսահմանելի է: Գեղեցիկն այն է, երբ քո տեսածը քո մտքի մեջ եղածին համընկնում է: Աստծո ստեղծած ամեն ինչն է գեղեցիկ, բայց երբ նայում ենք ձորի ու ծառի տարբերությանը, ծառն ավելի նկատելի ու գեղեցիկ է: Գեղեցիկը՝ քո մտապատկերի մեջ կառուցած, քո ճաշակով ձևավորված գեղեցիկը, հանկարծ համընկնում է քո տեսածի հետ, ու դա գեղեցիկ ես համարում:

— Որպես գեղագետ ու արվեստաբան՝ մշտապես գեղեցիկի որոնումների մեջ եք, ու ասում եմ՝ հենց այդ միջոցով է արվեստագետն սկսում ճանաչել ինքն իրեն: Հաջողվե՞լ է Ձեզ իրապես ինքնաճանաչողության հասնել:

— Այո՛, ինչ անում եմ, ինքս ինձ եմ ճանաչում, բնավորությանս հետաքրքիր գծերն եմ հայտնաբերում, որոնց մասին մինչև հիմա չեմ մտածել: Խաղաղություն տենչող, հաշտության ձգտող, սուր անկյուններ չսիրող մարդ եմ: Դա միգուցե արտահայտված է նաև նկարներիս ներդաշնակության մեջ: Նկարներս օգնում են այդ ճանաչողությանը: Հասկանում եմ, որ հանգիստ մարդ լինելով՝ այնքան էլ հանգիստ չեմ, եթե անընդհատ ստեղծում եմ...

— Եվ վերջին հարցը. այսօրվա աշխարհը, մարդիկ, կյանքը գեղեցի՞կ են՝ ըստ Ձեզ:

— Այսօրվա իմ ապրած ժամանակը, մեղմ ասած, գեղեցիկ չէ: Եթե հարցնեին՝ ե՞րբ կուզեիր ծնվել, կասեի՝ հաստատ ոչ հիմա: Գեղագետի համար գեղեցիկ չէ, իսկ ես անուղղելի գեղագետ եմ, ապրում եմ իմ աշխարհով ու ապրեցնում ինձ, մի քիչ էլ գուցե ուրիշներին: Այսքան խորը զբաղվելով արվեստով՝ փորձում եմ այսօրվա իրականությունից խույս տալ, գնալ անցյալ, Ալեքսանդրապոլ, Արևմտյան Հայաստան, Պոլիս: Փորձում եմ այդպես գնալ պատմության խորքը, սիրում եմ պատմական քաղաքներում լինել: Իմ ամենասիրած ժամանակաշրջանը 18-րդ դարն է: Իդեալականացնում եմ անցյալը: Արվեստի միջոցով իմ փղոսկրյա տաճարն եմ փորձում կառուցել, որ ապրեմ մեջը: Այլ կերպ չեմ կարող:

Սարսափելի վիճակում է աշխարհը: Սառը, անհասկանալի և անորոշ ժամանակներ են: Այնպիսի աբսուրդ բաներ են կատարվում, իսկ ես աբսուրդի ժանրը չեմ սիրում: Անհեթեթություն չեմ սիրում: Սիրում եմ կանոնիկ, հանդարտ կյանքը: Ուզում եմ հանդարտվի, հատկապես մեր այսքան տառապանք կրած երկիրը: Հպարտ եմ անկախ շրջանի քաղաքացի լինելու համար, դա մեր օրոք եղավ, բայց վախենում եմ անկախությունը կորցնելուց: Երկփեղկված ապրում ենք, մի կեսս՝ այսօրվա հոգսերով ու տագնապով, մյուսը՝ դեպի անցյալի իդիլիկ վիճակները: Արվեստը պետք է օգնի, որ կարողանանք ապրել, փրկօղակ է, որ դիմանանք: Արվեստում անպարտելի ենք ու գեղեցիկ:

— Շնորհակալություն հարցազրույցի համար:

Հարցազրույցը՝
Մեղրի ՂՈՒԿԱՍԵԱՆԻ

Տոն Սուրբ Հովհաննես Մկրտչի և Սուրբ Աթանագինե եպիսկոպոսի

Սուրբ Հովհաննես Մկրտիչը համաքրիստոնեական սրբերից է: Հայոց Եկեղեցում Հովհաննես Մկրտչին նվիրված չորս տոն կա.

1. «Տօն ծննդեան Ս. Յովհաննու Կարապետին»,
2. «Յիշատակ գլխատման Ս. Յովհաննու Մկրտչի»,
3. «Տօն Սրբոցն Յովհաննու Կարապետին և Աթանագինեայ եպիսկոպոսին»,
4. «Սրբոցն Յովհաննու Կարապետին և Յոբայ արդարոյն»:

Հովհաննես Մկրտիչն Աբիայի քահանայական ընտանիքից Զաքարիա քահանայի և Եղիսաբեթի որդին էր: Ղուկաս ավետարանիչը գրում է. «Երկուսն էլ Աստծո առաջ արդար էին ու անարատ կերպով ընթանում էին Տիրոջ բոլոր պատվիրանների և օրենքների ճանապարհով» (Ղուկ. Ա 6): Երկուսն էլ առաջացած տարիքում էին, սակայն որդի չունեին, քանի որ Եղիսաբեթն ամուլ էր: Աստված, տեսնելով նրանց արդար ընթացքը, օրհնեց՝ զավակ պարգևելով: Երբ Զաքարիան տաճարում իր քահանայական ծառայության ժամանակ խնկարկում էր, Տիրոջ հրեշտակը երևաց նրան՝ ասելով. «Մի՛ վախեցիր, Զաքարիա, որովհետև քո աղոթքները լսելի եղան. քո կինը՝ Եղիսաբեթը, որդի կծնի քեզ, և նրա անունը Հովհաննես կդնես» (Ղուկ. Ա 13):

Հովհաննես Մկրտիչն իր քարոզչությունն սկսել է երեսուն տարեկանում՝ Հռոմի Տիբերիոս կայսեր տասնհինգերորդ տարում: Նրա քարոզչության վայրը Հորդանանի հովիտն էր. ապրում էր խստաբարո կյանքով, հագնում էր ուղտի բրդից զգեստ՝ կաշվե գոտիով, «նրա կերակուրը մորեխ էր և վայրի մեղր» (Մատթ. Գ 4): Հովհաննես Մկրտչի համբավն այնքան մեծ էր, որ Երուսաղեմից և Հորդանանի բոլոր շրջաններից մարդիկ գալիս էին՝ ունկնդրելու նրա քարոզները: Մկրտում էր անապատում՝ քարոզելով ապաշխարություն՝ մեղքերի թողության համար: Հովհաննես Մկրտչի գործունեության բարձրակետը Հիսուս Քրիստոսի մկրտությունն է: Երբ տեսնում է, որ Հիսուս մյուս մարդկանց հետ մոտենում է իրեն՝ մկրտվելու, մարգարեական հոգով ճանաչում է Նրան և հրաժարվում, սակայն Տիրոջ խոսքին անսալով՝ մկրտում է և ի լուր ամենքի՝ հայտարարում. «Ահա Աստծու Գառը, որ վերացնում է աշխարհի մեղքը» (Հովհ. Ա 29):

Հիսուսի մկրտությամբ և Նրան՝ իբրև խոստացյալ Մեսիայի հայտարարությամբ Հովհաննեսի առաքելությունն ավարտվում է:

Այս ամենից որոշ ժամանակ անց Հերովդես թագավորը բանտարկում է Հովհաննեսին: Մկրտիչը հանդիմանել էր Հերովդեսին, քանի որ վերջինս, ոտնահարելով հրեական օրենքն ու սովորույթները, իր եղբորից՝ Փիլիպպոսից, բռնությամբ խլել էր նրա կնոջը՝ Հերովդիային, և ամուսնացել նրա հետ: Հովհաննես Մկրտիչը մեծ հեղինակություն ուներ, և Հերովդես արքան չէր համարձակվում նրան մահապատժի ենթարկել: Հերովդեսի ծննդյան տոնին մեծ խնջույք կազմակերպվեց, որի ժամանակ Հերովդիայի դուստրը՝ Սալոմեն, հրավիրվածների առաջ պարեց և հմայեց արքային: Հերովդեսը խոստացավ նրան տալ այն, ինչ որ կամենա, և վերջինս մոր խրատով ցանկացավ Հովհաննես Մկրտչի գլուխը: Թագավորը տրտմեց, բայց քանի որ սեղանակիցների առաջ երդում էր տվել, կարգադրեց գլխատել Հովհաննես Մկրտչին. «Նրա գլուխը սկուտեղով բերվեց ու աղջկան տրվեց, աղջիկն էլ այն տարավ իր մորը: Եկան Հովհաննեսի աշակերտները և մարմինը վերցրին ու թաղեցին» (Մատթ. ԺԴ 11):

Տիցիան, «Հովհաննես Մկրտիչ», 1555 թ.

Աթանագինե եպիսկոպոսը քրիստոնյա ծնողների զավակ էր, ապրում էր Սեբաստիայում Դիոկղետիանոս կայսեր օրոք: Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հայրապետն ամուսնացել էր նրա քրոջ՝ Մարիամի հետ: Ամուսնացել և զավակներ է ունեցել, ապա ձեռնադրվել է քահանա: Սեբաստիայի մետրոպոլիտը նրան եպիսկոպոս է ձեռնադրել Փոքր Հայքի Պիտակտո քաղաքում, քանի որ նրա աղոթքով սատկել էր մի վիշապ: Շրջանի դատավորը հրամայում է Աթանագինե եպիսկոպոսին բերել իր ատյան: Նա դատավորին ներկայանում է իր տասը աշակերտներով: Դատավորը հրամայում է զոհ մատուցել կուռքերին, սակայն նրանք հրաժարվում են: Ապա դատավորը հրամայում է նրանց գլխատել:

Երբ հայոց դարձից հետո Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, Կեսարիայում քահանայապետ ձեռնադրվելով, վերադառնում է Հայաստան, իր հետ բերում է նաև Հովհաննես Մկրտչի և Աթանագինե եպիսկոպոսի մասունքները: Սուրբ Հայրապետը մասունքները բերում է Տարոն գավառ և ամփոփում այնտեղ, որտեղ «կայ բագին Կիսանեա և Դէմետրեա» (ՄՄ ձեռ. 2547, թերթ 171բ): Սուրբ Լուսավորչի աղոթքով և Սուրբ Հովհաննես Մկրտչի Աջով խորտակվում է բագինը: Բագինի աջ կողմում ամփոփում է Սուրբ Հովհաննես Մկրտչի, իսկ ձախ կողմում՝ Աթանագինե եպիսկոպոսի մասունքները (ՄՄ ձեռ. 2547, թերթ 171բ): Այնուհետև նույն տեղում հիմնում է Ինանակյան վանքը, որը հայտնի է նաև Մշո Սուրբ Կարապետ և Գլակա վանք անուններով:

Մատենագրական հիշատակություններ են պահպանվել Սուրբ Հովհաննես Մկրտչի մասունքների մասին: Ըստ Մովսես Կաղանկատվացու՝ Հովհաննես Մկրտչի գլխատումից հետո, երբ նրա աշակերտները վերցնում են ուսուցչի մարմինը և հողին հանձնում, երկնքից մի քար է ընկնում և կործանում Հերովդեսի տունը, իսկ գլուխը երկար ժամանակ մնում է այնտեղ: Հովհաննես Մկրտչի գլուխն այնքան է մնում այնտեղ, մինչև երկու ճգնավոր հայտնվում են Երուսաղեմում: Նրանք, ի պատասխան իրենց աղոթքների, տեսիլքով գտնում են Մկրտչի գլուխը. «Եւ տեսիլքով Սուրբ Յովհաննէսը երևաց եւ մատով ցոյց էր տալիս, թե՝ այստեղ է: Արթնանալով ծագած լոյս տեսան սուրբ գլխի վերևում, ապա փորեցին և գտան» (Յովհաննէս Մկրտչի պատուական գլխի մասին...., «Գանձասար», հտ. Ա, 1992, էջ 5): Ճգնավորները վերցնում են սրբի գլուխը, դնում պարկի մեջ, վրան հարդ լցնում, որպեսզի ոչ ոք չտեսնի, ապա ճանապարհ են ընկնում: Ճանապարհին նրանց միանում է մի մուրացկան, և երբ նրանք ննջում են, ինքը՝ Հովհաննես Մկրտիչը, երևում է մուրացկանին և պատվիրում վերցնել գլուխն ու հեռանալ: Ճգնավորներն արթնանալով փնտրում են Մկրտչի գլուխը, սակայն չեն գտնում, ապա սուրբը երևում է նրանց և ասում. «Մի՛ տրտմէք ինձ համար, քանզի ես այսպէս կամեցայ» (նույն տեղում): Մուրացկանը, գլուխը վերցնելով, տանում դնում է տանը, քանի որ շատերն էին իր մոտ գալիս՝ և՛ հիվանդներ, և՛ ախտաժետներ, և՛ ցավագարներ: Գիշերը տանը մի աման ջուր էր դնում, և առավոտյան ովքեր լվացվում կամ խմում էին այդ ջրից, բժշկվում էին:

Մուրացկանից հետո գլուխը հասնում է մի բրուտի, և նա նույնպես բժշկում էր հիվանդների: Նա մի կուժ է պատրաստում և Հովհաննես Մկրտչի գլուխը դնում նրա մեջ: Երբ բրուտը մահանում է, գլուխը հասնում է եղբորը՝ Ջալալ Դոլային՝ Արցախի տիրոջը: 1211 թ. Ջալալ Դոլան գնում է եղբոր մոտ և խնդրում սրբի գլուխը, սակայն բրուտը չի համաձայնում, իսկ նա բռնությամբ հափշտակում է եղբորից և բերում Արցախ գավառի Գանձակի կողմերը՝ իր հայրենի շիրիմի հանգստարանը: Եվ գլուխն ամփոփելով՝ վրան եկեղեցի է կառուցում՝ ի փառս Քրիստոսի և Սուրբ Հովհաննես Մկրտչի. «Եւ նաւակատիքի օրը, անուանակոչութեանը, Գանձասարի Սուրբ Յովհաննէս անուանակոչեց» (նույն տեղում, էջ 6):

Սուրբ Հովհաննես Մկրտչի մասունքների մասին վկայություն կա նաև Առաքել Դավիրժեցու «Պատմություն» երկում: Պատմիչը գրում է, որ երբ շահ Աբասը ջուղայեցիներին հանեց Հին Ջուղայից և քշեց տարավ Պարսկաստանի Սպահան քաղաքը, ջուղայեցիները չկարողացան ունեցվածքներն իրենց հետ տանել՝ թաքցնելով դրանք սենյակներում, հորերում, վիհերում: Դրանից հետո մահմեդական Մեհրամ անունով մեկը գալիս է Հին Ջուղա՝ ինչք որոնելու: Վերին կաթան անվանված եկեղեցում՝ Ավագ խորանի արևելյան պատի մեջ, նա գտնում է մի խեցե աման, որի մեջ դրված էր փայտե փոքրիկ արկղ: Երբ խեցե ամանի միջից հանում է փայտյա արկղը, իսկույն նրանից բուրում է շատ թանձր անուշահոտություն, և պատմիչը գրում է. «Սրանով իր հոգում այլազգի այդ մարդը զգաց, թե դրանք սրբի նշխարներ են» (Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Երևան, 1988, էջ 406): Արկղի մեջ կային մեծ ու փոքր ոսկորների կտորներ, և դրանց հետ կար մի կտոր մագաղաթ, որի վրա ինչ-որ բան էր գրված: Նա արկղը տանում է իր տուն, նշխարները պահում շատ օրեր, և նրա հարստությունը օրեօր սկսում է նվազել, կենդանիները սատկում են, մինչև իսկ՝ որդիները մեռնում: Նա ինքնաքննությամբ հասկանում է, որ նշխարներից է, ուստի հանում է իր տնից, տանում բացօթյա մի քարակույտի մեջ պահում, որ Տիրոջ ցասումն իր տան վրայից վերանա, սակայն չի վերանում:

Ապա Մեհրամը գնում է Սուրբ Նախավկայի միաբանություն, որը գտնվում է Դարաշամբ գյուղում, գտնում Շմավոն անունով մի եպիսկոպոսի և պատմում եղելությունը: Եպիսկոպոսը պատվիրում է արկղն իր մոտ բերել, և երբ բերում է, եպիսկոպոսը, բացելով արկղը, տեսնում է մասունքը և մագաղաթի կտորի վրա կարդում. «Սա Սուրբ Հովհաննես Կարապետի նշխարների մասն է, որ Գրիգոր Լուսավորիչը բերեց Հայաստան և դրեց Խրամ քաղաքում. հայոց 421(972) թվականին բերին Ջուղա» (նույն տեղում, էջ 407): Եպիսկոպոսն այլազգուն ինչք է տալիս և նրանից վերցնում նշխարները:

Օրեր հետո այս ամենը հայտի է դառնում Սպահան գնացած հայ ժողովրդին, որի գլխավորը խոջա Նազարն էր: Քանի որ խոջա Նազարը չափազանց հզոր էր, ինչպես նաև շահ Աբասին սիրելի էր, ուստի ջուղայեցիներից մի քանի հոգու ուղարկում է Շմավոն եպիսկոպոսի մոտ՝ նրանից խնդրելու նշխարները: Խոջա Նազարից վախենալով՝ եպիսկոպոսը չի կարողանում մերժել և նրանց է տալիս նշխարները, սակայն մասերից մեծ կտորը՝ թիակի գլուխը, թաքցնում է:

Շմավոն եպիսկոպոսը այդ մասունքն իր մոտ պահում է մինչև 1654 թվականը՝ Հակոբ վարդապետի կողմից Սուրբ Ստեփանոս Նախավկա վանքի նորոգումը: Այցելելով վարդապետին՝ նրան հայտնում է նշխարի մասին: Նշխարի համար աղյուսաձև արծաթյա արկղ են պատրաստում, ոսկեզօծում՝ թանկագին քարեր ընդուզելով, այնտեղ զետեղում Սուրբ Հովհաննես Մկրտչի մասունքը և դնում Սուրբ Ստեփանոս Նախավկա վանքում՝ մյուս սրբությունների հետ:

Մարիամ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արամայիս սրկ. ԱԶԻԶՅԱՆ

Աստվածաշունչ՝ գիրք գրոց



ԱՍՏԾՈՒ ՇՆՈՐՀՆԵՐԻ ԲԱՐԻ ՏՆՏԵՍՆԵՐԸ

Ուրաքանչիւր ոք ինչպիսի շնորհ որ ընդունել է, ուրիշի հանդէպ թող նոյնը մատակարարի որպէս բարի տնտես Աստծու պէս շնորհների: Եթէ մէկը խօսի, թող այդ լինի Աստծու պատգամների նման: Եթէ մէկը մատակարարի, թող այդ լինի այն զօրութիւնից, որն Աստուած շնորհում է, որպէսզի ամէն ինչում Աստուած փառաւորուի Յիսուս Քրիստոսի միջոցով, որին փա՛ռք եւ զօրութի՛ւն յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Ա Պետրոս, 10:11

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com qristhay@etchmiadzin.am
web կայք՝ krishayas.wordpress.com etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 18.06.2024 թ.
Տպաքանակը՝ 1265